Azg
armenian daily
18 ԱՊՐԻԼ 1998 ՇԱԲԱԹ #67 (1570)

Մայիսի 28-ին կնշվի Հայաստանի Առաջին Հանրապետության 80-ամյակը

ԵՐԵՎԱՆ, 17 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏՍՊԱՆ: Նախագահ Ռոբերտ Քոչարյանն ապրիլի 16-ին հրամանագիր է ստորագրել «1998 թ. մայիսի 28-ին Առաջին Հանրապետության հոբելյանական տոնակատարությունը նշելու մասին»: Ըստ ՀՀ նախագահի մամլո գրասենյակից ստացված հաղորդագրության, հրամանագրով Առաջին Հանրապետության 80-ամյա տարելիցը նշելու նպատակով ստեղծվել է Առաջին Հանրապետության հոբելյանական տոնակատարության կազմակերպման պետական հանձնաժողով: ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանի գլխավորությամբ: Հանձնաժողովին հանձնարարվել է մշակել եւ 10-օրյա ժամկետում կառավարության հաստատմանը ներկայացնել հոբելյանական տոնակատարության անցկացման միջոցառումների ծրագիրը:

ՄՈՍԿՎԱ

Ապրիլի 24-ը դումապանության օ՞ր

Ռուսաստանի Պետդուման երեկ երկրորդ անգամ մերժեց Սերգեյ Կիրիենկոյի թեկնածությունը: Նրան վարչապետի պաշտոնում հաստատելու օգտին այս անգամ քվեարկեցին ավելի փոքր թվով պատգամավորներ, քան նախորդ անգամ: Ընդամենը 115 կողմ եւ 271 դեմ: Պետդումայում Ռուսաստանի կոմկուսի խմբակցության առաջնորդը հայտարարեց. «Եթե այսօր մենք արիություն չցուցաբերենք, բոլորս կդառնանք Ռուսաստանի Դաշնության վերջնական կազմալուծման մեղսակիցները: Մենք չենք քվեարկի Կիրիենկոյի թեկնածության օգտին»: ՌԼԴԿ-ի առաջնորդ Վլադիմիր Ժիրինովսկին խորհուրդ տվեց Բորիս Ելցինին առողջական վաս վիճակի պատճառով դուրս չգալ Կրեմլի սահմաններից: Դիմելով Կիրիենկոյին Ժիրինովսկին ասաց. «Ձեր ապագա կառավարության ողջ էկոնոմիկան հիմնված է մեկ բանի վրա շարունակել մասսաս վաճառել մեր լավ տունը: Բնակարան առ բնակարան վաճառում ենք, իսկ հետո բոլորս կմնանք նկուղում: Մենք ցանկանում ենք ապրել վերեւում: Ձեզ բոլորիդ միեւնույն է կլցենք նկուղ»: Իսկ «Յաբլոկո» շարժման առաջնորդ Գենադի Յավլինսկին ասաց. «Յաբլոկո» պատգամավորական խումբը վճռականորեն բողոքում է ուժային ճնշման


ՌՈՅԵՏԵՐ-ԱՐՄԵՆՊՐԵՍ

եւ հաստատես կաշառելու քաղաքականության դեմ, որն արտահայտվեց վերջին օրերին: Երբ քաղաքական երկխոսությունը փոխարինվում է կաշառքով, մենք նախատես հայտարարում ենք, որ այդպիսի քաղաքական երկխոսությունից հրաժարվում ենք»: Պատասխան Պետդումայի բոլոր խմբակցություններն էլ մերժեցին Կիրիենկոյի թեկնածությունը: Խոսելով սակայն ապրիլի 24-ին կայանալիք երրորդ քվեարկության մասին, շատ պատգամավորներ նշեցին, թե չի կարելի թույլ տալ, որ նախագահը ցրի Պետդուման, քանի որ խորհրդարանի ներքին պալատը թույլ չի տալիս, որ Կրեմլը ինչ ուզենա անի: Իսկ Բորիս Ելցինը, ինչպես եւ սպասվում էր, երրորդ անգամ առաջադրեց Սերգեյ Կիրիենկոյի թեկնածությունը եւ սպառնաց, որ եթե դումայականները ուզում չառնեն որ կարծիքը, ինքը կցրի Պետդուման եւ կնշանակի նոր ընտրություններ: Այսպիսով, Դումայի ճակատագիրն այժմ կախված է դումայականներից:

Պատրաստեց
ԳՐԻԳՈՐ ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆԸ

ՍՈՐԲՈՆԻ ԳԻՏԱԺՈՂՈՎ

«Հայոց ցեղասպանության այժմեականությունը»

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, ապրիլի 16-18-ը Ֆրանսիայի Հայ դատի հանձնախմբի նախաձեռնությամբ Սորբոնի համալսարանում անցկացվում է «Հայոց ցեղասպանության այժմեականությունը» թեմայով գիտաժողով: Համառոտակի ներկայացնում ենք գիտաժողովի մի քանի մասնակիցների զեկուցումների հիմնական բովանդակությունը:

Գիտաժողովի մասնակիցներից է գերմանացի գիտնական, ծագումով թուրք **Ֆիրեթ Ադանիրը**: Նա ծնվել է 1941 թ. Իզմիրի (Զմյուռնիա) մերձակա Ֆոչա բնակավայրում: Անգլիական բանասիրություն, ապա պատմություն է ուսումնասիրել Ֆրանկֆուրտի համալսարանում: 1986 թ.-ից աշխատում է Բոխումի Ռուրի համալսարանի Հարավարեւելյան Եվրոպայի պատմության ամբիոնում, որը զբաղվում է մասնավորապես Օսմանյան կայսրության եւ Թուրքիայի պատմությամբ: Ֆիրեթ Ադանիրը հրապարակել է աշխատություններ ու հոդվածներ, որոնցում արծարծվում են ազգայնականության, ագրարային կառույցների եւ գյուղական համայնքների սոցիալական ընդվզումների հարցերը: Սորբոնի գիտաժողովում նրա զեկուցման թեման թուրքական պատմագրության տեսակետն է Առաջին աշխարհամարտի տարիների եւ հայերի վերաբերյալ: Թուրքիայի ազգայնական պատմագրության դիրքորոշման վերլուծությունից հետո զեկուցողը նշում է այն պատճառները, որոնք թուրք պատմաբանների համար անչափ դժվարացնում են Օսմանյան կայսրության անկման շրջանի քաղաքական ու սոցիալական իրողությունների անաչառ դիտարկումը:

Գիտաժողովի մասնակիցներից է ֆրանսահայ հոգեվերլուծաբան **Էլեն Փիրալյանը**: Հայերի ցեղասպանության եւ հոգեվերլուծության վրա հիմնվելով, նա փորձում է սահմանել, ինչպես ինքն է անվանում, «ցեղասպանական կառույցը» եւ դրա առաջացրած հոգեբանական ոչնչացման հետեւանքները: Փիրալյանը նպաստել է երեւանում հոգեբանական խորհրդատվության կենտրոնի ստեղծմանը եւ դրա բժիշկների պատրաստմանը: Նա գիտական մի քանի աշխատությունների հեղինակ է: Սորբոնի գիտաժողովում նրա զեկուցումը նվիրված է հայոց ցեղասպանության ժխտման փորձերին: Նա մասնավորապես նշում է, որ եթե ցեղասպանության ծրագիրը սահմանենք որպես մի ամբողջ ժողովրդի, նրա ակունքների եւ ապագայի բնաջնջման փորձ, ապա պետք է խոսել ոչ միայն ողջերի բնաջնջման, այլեւ ողջ ծագումնաբանության ոչնչացման մասին: Այդ ժխտման շարունակումը շրջափակում է հոգեբանական ամբողջ կյանքը, միաժամանակ խոչընդոտելով սպանության խորհրդանշումը ինչպես զոհերի համար, դրանով դահիճ-զոհ զույգը պահպանելով որպես կապի հնարավոր միակ մոդել:

Տես էջ 2

«Չիլլերի գործով» հանձնաժողով ստեղծվեց

ԱՆԿԱՐԱ, 17 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ապրիլի 16-ին Թուրքիայի խորհրդարանը ստեղծեց հատուկ հանձնաժողով, որը զբաղվելու է «Ճշմարիտ ուղի» կուսակցության նախագահ Թանսու Չիլլերի անձնական ակտիվների ուսումնասիրությամբ: Այս ծրագիրն առաջարկել էր վարչապետ Մեսուտ Յըլմազի «Մայր հայրենիք» կուսակցությունը եւ հավանության էր արժանացել սոցիալ-դեմոկրատների կողմից: Հանձնաժողովը հաղորդում է նախապատրաստելու հիմնվելով այն պնդումների վրա, թե Չիլլերը չարաշահել է իր դիրքորոշումը պատգամավոր եւ վարչապետ եղած ժամանակ՝ իր անձնական հաշվում միլիոնավոր դոլարներ կուտակելով: Եթե խորհրդարանը հաստատի հաղորդման մեջ ներկայացված մեղադրանքները, ապա Չիլլերը կկանգնի գերագույն դատարանի առջեւ:

ՌՈՅԵՏԵՐ-ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՀԱՄԱՌՈՏ

Իրանի փոխարտգործնախարարը կայցելի Երեւան

ԵՐԵՎԱՆ, 17 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐՔ: Ապրիլի 20-ին սպասվում է Իրանի փոխարտգործնախարար Մորթեզա Սամադիի այցը Երեւան: Ինչպես հայտնեցին Հայաստանում Իրանի դեսպանատանը, 2-3 օր տեւելիք այցելության նպատակն է Հայաստանի ղեկավարության հետ հայ-իրանական երկկողմ հարաբերություններին, տարածաշրջանային համագործակցությանը եւ միջազգային հիմնախնդիրներին առնչվող հարցերի քննարկումը:

ԱՄՆ պատշգամավորության նախարարը Թուրքիայում

ԱՆԿԱՐԱ, 17 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԱՄՆ-ի պատշգամավորության նախարար Ուիլյամ Քոհենը Թուրքիայի պատգամավորների հետ բանակցություններ անցկացնելու նպատակով ապրիլի 17-ին երկօրյա այցով ժամանեց Անկարա, հաղորդել է «Անատոլու» գործակալությունը: Այցի ընթացքում Քոհենը հանդիպումներ է ունենալու Թուրքիայի վարչապետ Մեսուտ Յըլմազի, արտգործնախարար Իսմայիլ Ջեմի, պատշգամավորության նախարար Իսմեթ Սեզգինի եւ բանակի փոխհրամանատար Չեւիկ Բիրի հետ: Թուրքիայի կառավարության աղբյուրների համաձայն, բանակցությունները ամենայն համանականությամբ կկենտրոնանան Թուրքիա-ԱՄՆ ռազմական հարաբերությունների, Թուրքիայի եւ Հունաստանի միջեւ ծգծգվող հակամարտության, Էգեյան ծովում Թուրքիայի ունեցած խնդիրների եւ Մերձավոր Արեւելքի իրավիճակին վերաբերող հարցերի շուրջ: Ապրիլի 18-ին Քոհենը Թուրքիայից կմեկնի Հորդանան: Նախատեսվում է նաեւ նրա այցը Եգիպտոս, Իսրայել եւ Հունաստան:

Ըստ Մոսկվայի՝ Բաքվում չպետք է լինի Իշկերիայի դեսպանատուն

17 ԱՊՐԻԼ, BBC: Ռուսաստանի դեսպանությունը Բաքվում պատշգամավորական հայտարարագիր հրապարակեց, որում նշվում է, որ չեչենական Իչկերիա հանրապետությունը Ադրբեջանում չունի եւ չի կարող ունենալ պատշգամավորական դեսպանատուն:

Գերհարդ Շրյոդերը՝ Գերմանիայի կանցլերի թեկնածու

17 ԱՊՐԻԼ, DW: Լայպցիգում Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության արտահերթ համագումարի պատգամավորները ձայների ճնշող մեծամասնությամբ Ներքին Սաքսոնիայի վարչապետ Գերհարդ Շրյոդերին ընտրեցին Գերմանիայի հանցլերի թեկնածու: Ընտրությունները պետք է անցկացվեն սեպտեմբեր ամսին եւ 54-ամյա Շրյոդերը մրցելու է Գերմանիայի այժմյան կանցլեր Հելմուտ Քոլի հետ: Ըստ հարցախույզերի, ԳՍԴԿ-ն այժմ 10 տոկոսով առաջ է անցել քրիստոնեա-դեմոկրատներից:

ԿԸՀ

Կարեն Դեմիրճյանը հավակնում է պատգամավորական աթոռի

ԵՐԵՎԱՆ, 17 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐՔ: Հայաստանի նախագահության նախկին թեկնածու Կարեն Դեմիրճյանը եւ ՀՀ ԿԲ նախկին նախագահ, ներկայումս հանրապետության Բանկերի ասոցիացիայի նախագահ Բագրատ Ասատրյանը համաձայնություն են տվել Ազգային ժողովի պատգամավորության համար իրենց թեկնածությունները առաջ քաշելու: Այդ մասին հայտնեց ՀՀ ԿԸՀ քարտուղար Արմենուհի Զոհրաբյանը:

Ինչպես արդեն հաղորդվել է, մայիսի 31-ին 3 ընտրամասում Ամ ընտրություններ կկայանան: Այդ ընտրամասը նախկինում Ամ ներկայացնում էր Հանրապետական կուսակցության ղեկավար Ատոմ Նավասարդյանը, որը մահացել է անցյալ տարվա վերջին:

Զոհրաբյանի խոսքերով, ԿԸՀ եւս 6 պատգամավորության թեկնածուների գրանցման հայտ է ներկայացվել: Հայաստանի Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը առաջ է քաշել Լեւոն Ներսիսյանի թեկնածությունը: Այս հինգը՝ Լեւոն Դարիբյանը, Ստեփան Ծաղիկյանը, Մարտին Սարգսյանը, Գեւորգ Մակարյանը, Վլադիմիր Սաֆարյանը, անկուսակցականներ են:

Բագրատ Ասատրյանի թեկնածությունը առաջ է քաշել Հայաստանում նախկինում իշխող ՀՀՇ-ն, իսկ Կարեն Դեմիրճյանը առաջ է քաշվում քաղաքացիական նախաձեռնությամբ:

Թեկնածությունների առաջքաշման ժամկետը սպառվում է ապրիլի 21-ին: Պատգամավորության թեկնածուների գրանցումը տեղի կունենա մայիսի 6-ին:

Տասներկու թեկնածուներից միայն երեքն են ներկայացրել ֆինանսական հաշվետվություն

ԵՐԵՎԱՆ, 17 ԱՊՐԻԼ, ՍՆԱՐՔ: Հայաստանի նախագահի 12 թեկնածուներից միայն երեքն են իրենց անցկացրած նախընտրական պայքարի անցկացման ֆինանսական հաշվետվություն ներկայացրել ԿԸՀ: ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Ազգային-ժողովրդավարական միության ղեկավար Վազգեն Մանուկյանը եւ Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Շահնազարյանը: Այդ մասին հաղորդեց ԿԸՀ քարտուղար Արմենուհի Զոհրաբյանը:

Նրա խոսքերով, ՀՀ ԿԲ-ում Ռոբերտ Քոչարյանի հաշվին եղել է 60 մլն 19 հազար 999 դրամ: Ծախսվել է 56 մլն 51 հազար դրամը: Վազգեն Մանուկյանն իր հաշվին ունեցել է 3 մլն 397 հազար դրամ: Ծախսվել է 2 մլն 372 հազարը:

Դավիթ Շահնազարյանը 6 մլն դրամից ծախսել է 5 մլն 953 հազար 500 դրամը:

ՀՀ նախագահի ընտրությունների մասին օրենքի համաձայն, հաշվետվությունները ԿԸՀ ներկայացնելու ժամկետը լրանում է մայիսի 16-ին:

digitised by A.R.A.R.@

ՈՒՇԱԳԻՐ

ՍՈՐԲՈՆԻ ԳԻՏԱԺՈՂՈՎ

«Հայոց ցեղասպանության այժմեականությունը»

Սկիզբը էջ 1

Ֆրանսիացի պատմաբան Իվ Թեռնոնը (ծնվել է 1932 թ.) մասնագիտությամբ վիրաբույժ է: 1965 թ. նա պատմական հետազոտություններ է կատարում հրեաների եւ հայերի ցեղասպանության վերաբերյալ: Պատմագիտության դոկտոր է Սորբոնի համալսարանում: Նացիզմի վերաբերյալ երեք աշխատությունների հեղինակ է: Հրատարակել է նաեւ «Հայեր. մի ցեղասպանության պատմություն» (1977 եւ 1996 թթ.), «Հայ դատը» (1953), «Մի ցեղասպանության ժխտման քննություն» (1989 թ.), «Հանցագործ պետություն» (1995 թ.) աշխատությունները: Ներկա գիտաժողովում նա մասնավորապես զուգահեռներ է անցկացնում հայերի եւ ռուանդացիների ցեղասպանությունների միջեւ: Դրանցից մեկը տեղի ունեցավ դարասկզբին, մյուսը՝ դարավերջին (1994 թ.): Դրանց ընդհանրությունը ոճրի նախապատրաստման եւ իրագործման մեջ է: Համեմատությունը թույլ է տալիս ավելի լավ ըմբռնել ցեղասպանության ոճրի առանձնահատկությունը, դրա բացառիկ հանցավոր բնույթը, իրագործմանը պետական մարմինների մասնակցությունը, ոճրագործների անպատժելիության վտանգը, որը դյուրացնում է համանման ոճիրների կրկնությունը եւ, վերջապես, ողջ ակնբախությանը հակառակ՝ ցեղասպանության սովորական դարձած ժխտումը:

Անահիտ Տեր-Մինասյանը Սորբոնի համալսարանի դասախոս է, հրատարակել է «Հայկական հարց» (1983 թ.) «Հայաստանի Հանրապետություն» (1989 թ.), «Խաչաձեւվող պատմություններ. սփյուռք-Հայաստան-Անդրկովկաս (1890-1990 թթ.)» (1997 թ.) աշխատությունները, բազմաթիվ հոդվածներ, այլ աշխատությունների համահեղինակ է: Գիտաժողովում նրա զեկուցումը վերաբերում է Մուշ քաղաքի եւ Մշո դաշտի հայ բնակչության բնաջնջմանը, որը Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության սակավ հայտնի դրվագներից է: Օսմանյան արխիվների հետազոտման վրա հիմնված հիմնական աշխատությունների բացակայությանն այս հարցում գումարվում է վկայությունների սակավությունը, որը երջանի մեկուսացվածության հետեւանքն է: Ահա թե ինչու ավելի միսիոներուհի Ալմա Յոհանսոնի վկայությունը հույժ կարեւոր է: Նա նորվեգուհի միսիոների հետ տնօրինում էր Մուշի որբանոցներից մեկը: Չնայած տեղահանման հրամանի առկայությանը, որը վկայակոչում են ժամանակակից թուրք պատմաբանները, Մուշի եւ Մշո դաշտի հայ բնակչությունը բնաջնջվել է տեղում, թուրքական իշխանությունների կանխամտածված ծրագրի համաձայն:

Պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը (ԱՄՆ) Հայաստանի եւ Միջին Արեւելքի պատմություն է դասավանդում Կալիֆոռնիայի համալսարանում: Նա Հայաստանի գիտությունների ակադեմիայի անդամ է: 1978 թ.-ից Կալիֆոռնիայի համալսարանի ժամանակակից հայոց պատմության ամբիոնի վարիչն է: Հրատարակել է մասնավորապես «Հայաստանն անկախության ճանապարհին» (1967 թ.), «Հայաստանի Հանրապետություն» (խառնահատոր, 1971-1996 թթ.), «Հայերի ցեղասպանությունը. պատմությունը, իրավականությունը, բարոյագիտությունը» (1982 թ.): Սորբոնի գիտաժողովում նրա զեկուցման մեջ մասնավորապես խոսվում է «ժխտողականության հիդրայի չորս գլուխների»՝ ժխտման, ռացիոնալացման, հարաբերականացման եւ գոռեկացման մասին: Ժխտողականության սակավ արդունավետության դեմքում դրանց ջատագովները փորձում են ռացիոնալացում եւ հարաբերականացում կիրառել իրենց դիրքորոշումն առավել համոզիչ եւ ընդունելի դարձնելու համար: Այսօր այդ մոտեցումները կիրառվում են ինչպես հայերի ցեղասպանության, այնպես էլ հրեաների ողջակիզման ժխտման նպատակով: Գոռեկացումը հիդրայի վերջին գլուխն է, քանզի թեեւ չի ժխտում զանգվածային կոտորածն ու բնաջնջումը, բայց փորձում է դրանք ներկայացնել 20-րդ դարի անընդմեջ բռնությունների շարանի մեջ: Այդուհանդերձ առկա են հուսադրող նշաններ, քանզի հրեական ողջակիզման բազմաթիվ մասնագետներ եւ իրավապատմաններ խոստովանում են, որ հայոց ցեղասպանության ժխտման հաջողությունը լայն ճանապարհ կհարթի մարդկության դեմ գործվող բոլոր ոճիրների ժխտման, ռացիոնալացման ու գոռեկացման առջեւ:

Քաղաքագիտության պրոֆեսոր **Ռոբերտ Սմիթը** (ԱՄՆ) 1980 թ.-ից աշխատում է Վերջինիայի նահանգի Ուիլյամսբուրգ քաղաքի «Ուիլյամ ընդ Մերի» քոլեջում, դասավանդելով քաղաքական տեսություն եւ ցեղասպանությունների համեմատական ուսումնասիրություն: Ցեղասպանությունների բնույթի, ժխտման եւ պատմության վերաբերյալ բազմաթիվ աշխատությունների հեղինակ է: Ներկա գիտաժողովում նրա զեկուցումը վերաբերում է 20-րդ դարի ցեղասպանություններին պետության մասնակցությանը եւ «ցեղասպանական դիտավորությանը»: Նա նշում է, որ 20-րդ դարի ցեղասպանությունների իրագործման համար անհրաժեշտ բոլոր տարրերը (բյուրոկրատիա, ժամանակակից հաղորդակցություններ, արագընթաց փոխադրամիջոցներ, համակենտրոնացման պարզունակ ճամբարներ) առկա էին 19-րդ դարի վերջերին: Բայց միլիոնավոր մարդկանց բնաջնջման նպատակով դրանց առաջին կիրառողը 1915 թ. Թուրքիայում իշխող հանցախումբն էր: Հայերի պարբերական կոտորածները 20-րդ դարի ցեղասպանության նախատիպն էին: Զեկուցման մեջ շեշտը դրվում է հայոց ցեղասպանության դրդապատճառների, իրականացման մեթոդների եւ նպատակների վրա:

Պ. Ք.

Թուրքիա. Հայկական եկեղեցու բարձրախոսակը գողացված

Փարիզի «Յառաջ» օրաթերթն իր ապրիլի 9-ի համարում տեղեկացնում է, որ անցյալ փետրվարին գողացվել է Թուրքիայի սեւծովյան Նիյոդ քաղաքի Բոր գավառի հայկական եկեղեցու 47X72 չափի բարձրախոսակը: Պատասխանելով «Ակօս» թերթին, որն իր ապրիլի 3-ի համարով էր տվել լուրը, տեղական ազահովության վարչությունը հայտնել է, որ գողերը բռնված չեն դեռեւս: Եկեղեցին 15 տարի օգտագործվել է որպես մթերանոց, իսկ դրանից առաջ՝ կինոդահլիճ: «Յառաջն» ավելացնում է, որ ԺԹ դարում գավառում շուրջ հազար հոգանոց համայնք է ապրել եւ գործել են Ս. Աստվածածին եկեղեցին եւ Արամյան վարժարանը:

Հայտարարություն

Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը անց է կացնում գիտաժողով նվիրված հայերենի ուղղագրությանը:

Գիտաժողովը տեղի կունենա ապրիլի 22-ին, ժամը 13-ին բանասիրական ֆակուլտետի 2-րդ հարկում՝ Ե. Չարենցի անվան սրահում:

Մասնակցել կարող են բոլորը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՍՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ

Շուկան երախը բացած կլանում է մայրաքաղաքի կանաչ տարածքները

Չպետք է թույլ տալ, որ խախտվեն քաղաքաշինական նորմերը

Այսօր Երեւանում անցկացվելու է համաքաղաքային շաբաթօրյակ, որի ընթացքում ցախատեսված է մաքրել ու կարգի բերել մայրաքաղաքի փողոցները, բակերը, զբոսայգիները, կատարել ծառատունկ:

«Երեւանի առանց այն էլ սուղ կանաչ տարածքը վերջին տարիներին ինտենսիվ կերպով բռնազավթված է քաղաքապետարանի հանցավոր թողտվության հետեւանքով: Դրան նպաստում է նաեւ սեփականաշնորհման ընթացքում դրական դրսեւորումներին զուգահեռ շարունակվող մայթերի, անցումների, եւ որն ավելի աղաղակող է, կանաչ զոտու, պուրակների զավթումը», ասված է Հայաստանի սպառողների միության եւ «Քաղաքամայր» հասարակական կազմակերպության քաղաքապետի պաշտոնակատար Կ. Արեյանին եւ ՀՀ բնապահպանության նախարար Ս. Շահազիզյանին ուղղված բաց նամակում: Այն ընթերցվեց «Քաղաքաշինության նորմերի խախտումներ» թեմայով կլոր սեղանի ժամանակ, որի մասնակիցները (ԱԺ-ից, Երեւանի քաղաքապետարանից, տարբեր հասարակական կազմակերպություններից ու լրատվամիջոցներից), ելույթների, բանավեճերի ու հարցադրումների արդյունքում հանգեցին միասնական եզրակացության, որը մի նախադասությամբ, ՀՀ ԱԺ պատգամավոր Ջեմմա Անանյանի խոսքերով կարելի է ձեւակերպել այսպես՝ շուկան երախը բացած կլանում է կանաչ տարածությունները, քաղաքի պատմաճարտարապետական դեմքը: Եզրակացությունն այս պարագայում մեկն է՝ չպետք է թույլ տալ, որ մայրաքաղաքի եւ ոչ միայն մայրաքաղաքի քաղաքաշինական նորմերը կոպտորեն ու անխնա կերպով խախտվեն, պետք է կասեցնել ու կանոնակարգել վերջին 5-6 տարիների ընթացքում կատարված ապօրինի շինությունները:



«Քաղաքամայր» կազմակերպության ներկայացուցիչ Արամ Արամյանը բերեց վերոհիշյալն ապացուցող բազմաթիվ օրինակներ, մասնավորապես, որ Երեւանի Օղակաձեւ զբոսայգին դարձել է ապօրինական շինությունների հարմար վայր, Գյուղատնտեսական ակադեմիայի եւ Երեւանի պետական համալսարանի միջեւ հոսող Գետառի վրա ապօրինաբար կառուցվում է սրճարան, ապօրինի շինություններով «հարստացել է» նաեւ Երեւանի գլխավոր Մատենադարանի պողոտան, Ազգային օպերայի հարակից կանաչ տարածքը բետոնապատվում է եւ կառուցվում են սպասարկման օբյեկտներ: Նմանապես, ապօրինաբար զավթվում են նաեւ կանաչ մայթեզրերը (գազոնները), սիգամարգերն ու կանաչ պուրակները՝ առեւտրի կետերի, կրպակների եւ տարբեր տաղավարների կողմից: Մինչդեռ հիմա, «բարի ժամանակներում» միայն Երեւանում կային մոտ 35 հա ընդհանուր տարածքով կանաչ գազոններ: Մի խոսքով շուկայական հարաբերությունները եւ առեւտրական մոլուցքը քայլ առ քայլ նվաճում են քաղաքի կանաչ տարածքները, եւ եթե այսպես շարունակվի, մայրաքաղաքի բնակիչները շնչահեղձ կլինեն միայն ասֆալտի, քարի ու բետոնի քաղաք դարձած Երեւանում:

Անօրինական շինությունների վերաբերյալ վերջերս ընդունվել է ՀՀ կառավարության 114 ապօրինի շինությունների վերացման որոշումը, որը սակայն հստակեցման եւ պարզեցման կարիք ունի, ինչպես նաեւ հետագա մշակման կարիք ունեն քաղաքաշինության հնուց մնացած եւ մինչեւ այժմ գործող նորմատիվները: Երեւանի քաղաքաշինության խորհրդական Տիգրան Մուկուչյանը ի պատասխան հավակվածների սուր քննադատությունների, անհերքելի փաստարկների ու հարցադրումների, հատուկ շեշտեց, որ քաղաքային ներկայիս իշխանությունները նույնպես մտահոգված են վերոհիշյալ խնդիրներով: Մշակվում են քաղաքաշինության, մասնավորապես կանաչ տարածքների, զբոսայգիների, հանգստի գոտիների, եւ ընդհանրապես շինությունների մասին նորմատիվային փաստաթղթեր: Պրն. Մուկուչյանը հավաստիացրեց, որ անցյալ տարիներին կառուցված յուրաքանչյուր ապօրինի համարվող շինություն պետք է անցնի «փորձաքննություն» եւ հաստատված նորմերին չհամապատասխանելու դեպքում (իսկ այդպիսի դեպքերն անկասկած շատ կլինեն), պետք է քանդվի կամ, հնարավորության դեպքում, տեղափոխվի այլ, թույլատրելի վայրեր: Իսկ վերոհիշյալ օբյեկտների ու շինությունների տնտեսական գործունեության արդյունավետության վերաբերյալ հարցին պրն. Մուկուչյանը պատասխանեց, որ վերջիններս հաստատված կարգով վարձավճարներ են մուծում, որոնց ծավալների մասին քաղաքապետի խորհրդականը տվյալ պահին տեղեկություններ չուներ:

Կլոր սեղանի մասնակիցների եզրակացությունը մեկն էր՝ պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկել կանաչ տարածքների բռնազավթումը կասեցնելու, կառույցների տեղադրման օրինականությունը ստուգելու եւ այդ ամբողջը քաղաքաշինության նորմերին համապատասխանեցնելու համար, քանի որ (դարձյալ տիկին Ջ. Անանյանի խոսքերով) դա ոչ միայն քաղաքաշինական, այլեւ բարոյական, դաստիարակչական, ճաշակի եւ ազգային արժանապատվության խնդիր է: Երեւանը, եւ ընդհանրապես հանրապետության մյուս քաղաքները, պետք է լինեն մայրաքաղաք կամ քաղաք ոչ միայն իրենց կարգավիճակով, այլեւ արտաքին տեսքով, կենցաղով ու ապրելակերպով:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՔՈՅԱՆ

Հայաստանի բնակչության մոտ 60 տոկոսը հարկ եղած դեպքում չի կարողանում դիմել բժշկի

ԵՐԵՎԱՆ, 17 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Առողջապահության սոցիալական խնդիրներին էր նվիրված Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի եւ Ժողովրդավարական քաղաքագիտական կենտրոնի կողմից կազմակերպված սեմինարը, որն անցկացվեց ապրիլի 17-ին «Քաղաքացիական ֆորում 1998 թ.» ծրագրի շրջանակներում:

Սեմինարի հիմնական զեկուցող ԵՊՀ ազգագրական ամբիոնի վարիչ, ՍԱԿ-ի ազգային փորձագետ Հրանուշ Խառատյանը, ներկայացնելով ուսումնասիրությունների արդյունքները, մասնավորապես նշեց, որ իրենց հիվանդ համարող մարդկանց հսկա մի զանգված հանրապետության բնակչության մոտ 60 տոկոսը, հարկ եղած դեպքում չի դիմում բժշկի օգնությանը, դրանով իսկ ավելի բարդացնելով առողջական վիճակը:

Տիկին Խառատյանի խոսքերով, կապված վճարովի բժշկական համակարգի ներդրման հետ, Հայաստանի բնակչության մեծ մասի համար «բժշկի հետ առնչվելը դարձել է հրաշք»: Այս պարագայում, բնականաբար, ծաղկում է ժողովրդական բժշկությունը: առաջացել է հասարակության մի ամբողջ շերտ՝ այսպես կոչված հոգեվերլուծաբանների մի խումբ, որոնք հանձն են առնում համեմատաբար էժան գներով «բուժել» իրենց վստահած հիվանդներին: Նման «բուժումները», ըստ Հրանուշ Խառատյանի, հաճախ հանգեցնում են հիվանդի վիճակի էլ ավելի վատթարացմանը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակություն է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրենություն / հեռ. 562863
Համակարգչային
ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի
Յողուածը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն
վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

Երկլեզվությունը՝ դամոկլյան սո՞ւր հայկական ոեսականության գլխին

Երեկ, լեզվի ոեական տեսչությունում «Լեզվի մասին ՀՀ օրենքի» հնգամյա հոբելյանի առթիվ գումարված գիտաժողովը որոշ իմաստով նախորդ օրը Բրյուսովի անվան օսար լեզուների ինստիտուտում մեկնարկած լեզվաբանության եւ ռուսաց լեզվի ուսուցման խնդիրներին նվիրված գիտաժողովի «հակաժողովն» էր: Առաջին (բրյուսովյան) գիտաժողովում կարեւորվեց ռուսաց լեզվի իմացությունն իբրեւ ռուս մշակույթին հաղորդակցվելու ուղիղ ճանապարհ (ԿԳՆ փոխնախարար Արամ Շահինյան), երկլեզվությունն իբրեւ «Հայաստանի ազգային հարստություն» (Հայաստանում Ռուսաստանի դեսպան Անդրեյ Ուոնով, որի կարծիքով «ռուսաց լեզուն ոչ թե հայերենի մրցակիցն է, այլ գործընկերը»). «Իսկական հայ հայրենասերը պետք է ռուսամետ (ռուսիստ) լինի»): Ամենացայտուն ելույթը, սակայն, Բրյուսով ինստիտուտի ռուսաց լեզվի եւ գրականության ամբիոնի վարիչ, ակադեմիկոս Լեւոն Մկրտչյանինն էր, որը ճնշադատեց «այսպես կոչված հայրենասերներին, որոնք պահանջում են հրաժարվել ռուսերենից», ինչպես նաեւ, «ակադեմիական» ավանդույթով, լեզվի ոեական տեսչության «գործած հիմարությունները, որոնց նպատակը սեփական գոյությունն արդարացնելն է», «իր պարտականությունները կատարելու փոխարեն ակնդետ հետեւելը, որ հայերը ռուսերեն չսովորեն»:

Գիտաժողովում ճնշարկված զուտ մասնագիտական խնդիրները շրջանցելով, նկատենք, որ երկու լեզուների հավասար կարգավիճակ ենթադրող «երկլեզվություն» հասկացողությունը եթե հասկանալի էր ԽՍՀՄ-ում, ապա անհասկանալի է Հայաստանի Հանրապետության պարագայում, որի ոեական լեզուն օրենսդրորեն հայերենն է:

Լեզվի տեսչությունում անցկացված գիտաժողովի նպատակն, ինչպես ասաց տեսչության ոես Վալերի Միրզոյանը, հայերենի հզորացումն էր: Գիտաժողովն սկսելով, պրն Միրզոյանի տեղակալ Հովհաննես Զաքարյանը հիշեցրեց հինգ տարի առաջ ընդունված լեզվի օրենքի դրույթները, այդ թվում ոեական պաշտոնյաների համար հայերենի պարտադիր իմացությունը: Եթե հայերենն իր բոլոր դրսեւորումներով Հայաստանում պետական կարգավիճակ ունի, ապա պաշտոնական լեզուն մեր երկրում գրական հայերենն է, ասաց նա նշելով, որ ոչ պետական լեզվով տրագրվող (իմա ռուսերեն) մամուլն այսօր ավելի լայն տարածում ունի, քան խորհրդային տարիներին (նկատի է առնվում ռուսերեն պարբերականների թիվը): Պետական լեզուն, որ, խորհրդանիշ լինելուց բացի, նաեւ երկրի անվտանգության պաշտպանության միջոց է, այսօր առավել, քան երբեւէ վտանգված է:

Վալերի Միրզոյանը խոսեց 1993 թ.-ին, «անբարենպաստ (ազգային վայրընթացի) պայմաններում» զրոյից ստեղծված լեզվի տեսչության կատարած շրջադարձային գործունեության մասին: Տեսչությունը հսկողական մարմին է, տեսչության աշխատակիցները լեզվաբաններ կամ բերականագետներ, եւ գիտական շրջանակների ջանքերով ստեղծվելիք պատասխանների լուծումների փոխարեն, սեփական իրավասություններն գերազանցելով, իրենք են լեզվի օրենքը կիրառելու լուծումներ որոնում: «Այսօր դարձյալ գլուխ է բարձրացնում երկլեզվության զառանցանքը, որից բոլոր երկրներում արդեն հրաժարվել են: Հնչում են հայերենասերժության, ռուսական դպրոցներ բացելու կոչեր: Մեզ ներկայացնում են իբրեւ ահաբեկիչների, փորձում խեղճացնել փոխելով մեր կարգավիճակը եւ այլ գերատեսչության մաս դարձնելով», արձանագրեց պրն Միրզոյանը դրական համարելով, սակայն, որ օրենքը «որոշ չափով ուժեղացել է լեզվական օրինախախտումների համար վարչական տույժեր սահմանելու առումով»: Տեսչության պետը անդրադարձավ Լեւոն Մկրտչյանի վերոհիշյալ ելույթին կասկած հայտնելով, թե «արժե՞ իջնել մի ակադեմիկոսի մակարդակին, որը տեսչությունը շան հետ է համեմատում» («Հայաստանի Հանրապետություն», 17 ապրիլի):

Տեսչության լեզվահսկողության վարչության պետ Նուրիս Բեժանյանը խոսեց կրթական համակարգերում անցկացված ստուգումների ընթացքում ի հայտ եկած «լեզվաքաղաքական» խաթարումների մասին, ռուսական դպրոցներում «բացառության կարգով» սովորող հայ երեխաների թվի անհնախադեպ ավելացում (8 ռուսական դպրոցներում ընդգրկված 1846 աշակերտներից 1588-ը հայ ընտանիքների երեխաներ են), հայկական դպրոցներում ռուսական առաջին դասարաններ բացելու բազմացող դեպքեր ԿԳՆ թույլտվությամբ, եւ այլն:

Մշակույթի փոխնախարար Արամ Մանուկյանը հայերենի հանրապետական մեծ ներդրում կատարողներին:

Նիստին ներկա էին վարչության 24 անդամներ, 20 «կողմ», 2 «դեմ» եւ 2 «ձեռնպահ» ձայներով նմուշն ընդունվեց: Առաջարկ եղավ նաեւ ՀԹՄՄ-ի վաստակավոր բարեւարի աստիճան շնորհելու մասին, որի քննարկումը տեղափոխվեց հաջորդ նիստ. «Հայ գիրքն այսօր» եւ «Հայ մշակույթի վաղվա օրը» ծրագրերի հետ: Վարչության նիստի հիմնական հարցը Թեքեյան հիմնադրամի ստեղծմանն էր վերաբերում, որի ընթացքի մասին տեղեկություն տվեց ՀԹՄՄ-ի փոխատենապետ Ժորա Հարությունյանը:

Հրաժեշտից առաջ հայտարարվեց, որ յուրաքանչյուր ամիս գումարվելու է վարչության նիստ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ
ԹՄՄ լրատվության բաժին

Երկլեզվությունը՝ դպրոցական տարիքի հայերի համար

Գավառի մանկատանը

Ոչ միայն մանկատան, այլեւ բարեկեցիկ ընտանիքներում ծնված եւ հասակ առած երեխաների համար բիվ մեկ խնդիրը եղել ու մնում է որեւէ մասնագիտության տիրապետումը: Այն էական է առավել եւս մանկատան սաների համար, որոնք զուրկ են ծնողական ուշադրությունից եւ ամենօրյա խնամքից: Խորապես զգալով ու կարեւորելով այս ուղղությամբ կատարվող յուրաքանչյուր քայլի անհրաժեշտությունը՝ Հայ աստվածաբանական եկեղեցու ԱՄՆ-ի Արեւելյան թեմի Հայ օգնության ֆոնդն արդեն երկրորդ ծրագիրն անցկացրեց Գավառի մանկատան երեխաների համար:

Առաջինն իրագործվեց անցած տարեվերջին, երբ ՀՕԴ-ի հովանավորությամբ ու աջակցությամբ մանկատան 23 սաներ հաղորդվեցին համակարգչային գրագիտության այբուբենին, սովորեցին այն «գործի դնելու» գաղտնիքը: Երեկ Գավառի պետական համալսարանում կայացած ավարտահանդեսը կոչված էր ամփոփելու երկրորդ «Հաշվողական հաշվառման» դասընթացի արդյունքները: Նոր ծրագիրն առաջինի նման հեղինակել էր Երեւանի պետական ճարտարագիտական համալսարանի դոցենտ Անդրանիկ Հովհաննիսյանը, իսկ իրականացրել էին Գավառի պետհամալսարանի եւ Երեւանի ժողտնտեսության ինստիտուտի դասախոսները: Երկու ամիս շարունակ մանկատան 17 սաներին դասավանդվեցին «Հաշվողական հաշվառում» առարկայի հիմունքները:

Ավարտական քննություններից հետո դրական նիշեր ստացան 14 տղաներ եւ աղջիկներ: Դրանք չեն մոռանա, անշուշտ, երեկվա հանդիսավոր օրը, երբ Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Վիգեն Եղս. Այֆազյանի ձեռամբ ստացան իրենց վաստակած մասնագիտական հավաստագրերը:

Դեմարիս հաստատի ճանապարհով

Առինջի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցում

Առինջը քաղաքամերձ մեր նախապատմական բնակավայրերից է, լաւագոյնս յայտնի նաեւ միջնադարում. յատկապէս Շագաւանքի Սուրբ Նշան նշանաւոր կրօնական կենտրոնով, որն այժմ թէկուզ աւերակ վիճակով, բայց ուխտատեղի է Գեղարքել անուամբ: Ամէն տարի Սուրբ Շաբաթի կիրակին հազարաւոր ուխտաւորներ այցելութիւն են կատարում 7-րդ դարի այդ սրբավայրը եւ թեթեւանում աշխարհական հոգսերից: Սակայն այս վերջին երկու տարիներն առանձնայատուկ իմաստ ունեն Առինջի համար, որովհետեւ բնակավայրի հիւսիսային բարձունքի վրայ, միջնադարեան ամրոցի մօտ յառնել է նորակառոյց մի հրաշակերտ եկեղեցի առանձնի բարեւար Գագիկ Ծառուկեանի հոգու պարտքն իր հաւատքին ու ժողովրդին: Երկրորդ կարեւոր իրադարձութիւնը գիւղի կենտրոնում գտնուող Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու վերաբացումն էր երկու ամիս առաջ, որը լինելով 19-րդ դարի կառոյց, բարեբախտաբար լաւ վիճակում է եւ առանց վերակառուցումների հնարաւոր եղաւ, որպէսզի Կոտայքի թեմն Առինջում ունենայ իր գործող եկեղեցին: Այսինքն ժողովրդին վերադարձուեց իր ունեցուածքը իբրեւ լաւագոյն պայման վերադառնալու իր ճշմարիտ հաւատքին: Այսօր, ապրիլի 18-ին, Սուրբ Յովհաննէս Մկրտչի գլխատման օրը հանդիսաւոր կերպով է նշուելու եկեղեցում: Առինջում եղել եմ եկեղեցու բացման հանդիսաւոր արարողութեանը: Թւում էր, թէ վեց հազար բնակիչ ունեցող Առինջի եկեղեցում այդ օրը ոտք դնելու տեղ չէր լինի: Յաւելեալ այդպէս չէր: Որոշ ժամանակ անց կրկին եղայ պատարագի արարողութեանը եւ վերջին մի քանի հոգի տեսա: Հարցաքննեցի ունեցայ Առինջի հոգեւոր հովիւ արժանապատիւ քահանայ Տէր Սահակ քահանայ Գալստեանի հետ:

– Կը խնդրեմ ներկայացնէք Ձեր գործունէութիւնը մինչեւ Առինջի հոգեւոր հովիւի պարտականութիւնը ստանձնելը:

– Գերաշնորհ Գրիգորիս արք. Բունիաթեանի կողմից շուրջ երեք տարի առաջ ձեռնադրուեցի որպէս քահանայ եւ նշանակուեցի Ստեփանաւանի եւ Տաշիրի հոգեւոր հովիւ: Մինչ վարչական վերաբաժանումները, այդ շրջանները պատկանում էին Շիրակի թեմին եւ այդտեղ ծառայեցի շուրջ երկու տարի: Տարածքների վերաբաժանումից յետոյ եկայ Կոտայքի մարզ եւ այստեղ Առաքել Սրբազան Քարամեանի կողմից նշանակուեցի որպէս հոգեւոր հովիւ: Ժողովրդի հետ շփուել եմ եւ կարողացանք ժողովրդին մի փոքր մօտեցնել եկեղեցուն, որովհետեւ այն կողմերը հաւատքի պակասութիւնը մի քիչ շատ է, յատկապէս Տաշիրում կաթոլիկ համայնքը մեծաքիչ է, իսկ Ստեփանաւանը երկար ժամանակ հեռու է մնացել եկեղեցուց: Սակայն ընթացքում ինձ յաջողուեց ժողովրդին որոշ չափով բերել եկեղեցի, եւ տեղի մեր փոքր համայնքը շատ օգտակար եղաւ: Այդ համայնքը, իհարկէ, աճեց, զարգացաւ: Այդ տարիները ինձ համար եղան շատ օգտակար: Ես փորձ ձեռք բերեցի, թէ ինչպէս կարելի է աշխատել տարաբնակ միջավայրերում, անհաւաս միջավայրում:

Մի քանի ամիս ծառայեցի Գիւմրիում եւ այժմ, երբ եկել եմ Կոտայք, ինձ համար նորութիւն չէ այսպիսի վիճակը, որ տեղւոյս եկեղեցին երկար տարիներ փակուած է եղել: Բնական է, որ դա ազդեցութիւն պիտի գործած լինէր ժողովրդի հոգեբանութեան վրայ: Այստեղ, իհարկէ, զգացւում է եւ ժողովրդի սէրը դէպի իր եկեղեցին, բայց միաժամանակ խորթութիւն է նկատւում, որովհետեւ 74 տարիներ անցաւուած են եղել: Բնիկ առինջեցիները հաւատաւոր մարդիկ են: Ի վկայութիւն դրա, կարող եմ ասել, որ Ծառուկեան Գագիկը մեծ բարեւար է: Նա այս գիւղում մի հրաշք եկեղեցի է կառուցում: Ժամանակին Առինջն ունեցել է զոյգ եկեղեցիներ՝ Սուրբ Աստուածամայրը, որ քանդուել է, եւ Սուրբ Յովհաննէսը, որում ես պաշտօնավարում եմ: Նաեւ Գեղարքելը, որը ուխտավայր է դարձած ժողովրդի համար: Հետեւաբար, սա նշանակում է, որ այս գիւղի բնակիչները հաւատքի իմաստով բարեպաշտ ժողովուրդ են:

Այստեղ կարեւոր է շատ ուշադրութիւնը մանուկների վրայ: Ես զգում եմ, մանուկները շատ են սիրում եկեղեցին: Իմ մէջ միտք է առաջացել այստեղ կիրակնօրեայ դպրոց հիմնել, որպէսզի կարողանանք կրթել գիւղի մանուկներին: Ունենք 6 հոգանոց երգչախումբ, դպիր: Եկեղեցին արդէն իր հունի մէջ է ընկել: Բոլոր տօները, ժամերգութիւնները ու պատարագները կատարւում են:

– Այնուամենայնիւ, ժողովուրդը դժուարութեամբ է գալիս եկեղեցի, հաւանաբար առօրեայ հոգսերը շատ են: Խորը հաւատքի գալը, իբրեւ նշանակալից փոփոխութիւն, բնական է, մի քանի օրուայ գործ չէ եւ նշանաւոր կառոյցների նման ուշ է ստեղծւում: Այնպէս որ, կարելի է շատ չանհանգստանալ, որ եկեղեցի այցելողների թիւը մինչեւ հիմա փոքր է:

– Այո, որովհետեւ դեռ երկու ամիս է անցել, ինչ գործում է եկեղեցին եւ առաջին պտուղները մենք զգում ենք:

Բայց եկեղեցին այսօր տարբեր պայմաններ չունի, մենք նստելու տեղ, այսինքն գրասենեակ կամ երիցատուն չունենք եւ դեռ չեմ կարողանում ընդունել գիւղի բնակիչները, որ ցիտի գան ամէն հարցերով: Առաջիկայ 2–3 տարիներին ինձ թւում է, կը լուծուի այդ հարցը: Կարծում եմ, որ Առինջը կարող ենք դարձնել հաւատքի կենտրոն, որտեղ կարող ենք ժողովրդով, հոգ բազմութեամբ հաւաքուել, աղօթել, քարոզել, ուսուցանել:

Օգտուելով առիթից, կարող ենք կոչ անել առինջեցի հարուստ մարդկանց, ովքեր հնարաւորութիւն ունեն օգնելու, եւ մենք այն ժամանակ կարող ենք ստեղծել եկեղեցական համայնք, որովհետեւ այդ ամէնը կապուած է դրամական միջոցների հետ, որպէսզի հնարաւոր լինի յետագային ֆոնդ ստեղծելու եւ եկեղեցին նաեւ բարեգործութեան տուն դարձնելու:

ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԵՐԵՎԱՆ

ՀԹՄՄ վարչության առաջին նիստը

Հայաստանի Թեքեյան մշակութային միության վարչության նախագահ ակադեմիկոս Լեւոն Մկրտչյանը շոշափելիորեն բացատրեց հրավիրել էր վարչության առաջին նիստը, որ մանրամասն բացատրություն տվեց առաջիկայում կայանալիք միջոցառումների ծրագրերի մասին: Հատկապես մանրամասն կանգ առնելով փոխանակեցին վարչության անդամներ Կարլոս Դալլաքյանը, Վարդուհի Վարդերեսյանը, Լեւոն Հախվերդյանը եւ այլք այն միջոցառումների մասին, որոնք վերաբերում էին Վահան Թեքեյանի ծննդյան 120-ամյակին, նրա անվան վերաբաղդատանը, հայ-ռուսական բարեկամության 185-ամյակին եւ քրիստոնեության 1700-ամյակին:

Ատենապետը վարչության համաձայնությանը ներկայացրեց հուշամեդալի առաջին նմուշը, որը տրվելու է ՀԹՄՄ-ին բարոյական եւ նյութական մեծ ներդրում կատարողներին:

Նիստին ներկա էին վարչության 24 անդամներ, 20 «կողմ», 2 «դեմ» եւ 2 «ձեռնպահ» ձայներով նմուշն ընդունվեց: Առաջարկ եղավ նաեւ ՀԹՄՄ-ի վաստակավոր բարեւարի աստիճան շնորհելու մասին, որի քննարկումը տեղափոխվեց հաջորդ նիստ. «Հայ գիրքն այսօր» եւ «Հայ մշակույթի վաղվա օրը» ծրագրերի հետ: Վարչության նիստի հիմնական հարցը Թեքեյան հիմնադրամի ստեղծմանն էր վերաբերում, որի ընթացքի մասին տեղեկություն տվեց ՀԹՄՄ-ի փոխատենապետ Ժորա Հարությունյանը:

Հրաժեշտից առաջ հայտարարվեց, որ յուրաքանչյուր ամիս գումարվելու է վարչության նիստ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ
ԹՄՄ լրատվության բաժին

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մերդյահակա

– Պրն Բաղալյան, այսօր ԱԺ-ն արդեն ինքնակում է նոր՝ արհեստավարժ խորհրդարանի ձեւավորման առաջին նախադայմանը՝ ընտրական օրենսդրությունը, ի՞նչ եք կարծում, ընտրական օրենսգրքի ընդունումից հետո որքանով է նպաստակահարմար խորհրդարանի վաղաժամկետ լուծարումը:

– Այն, որ այս ԱԺ-ն վաղուց չի համապատասխանում իր կոչմանը, մենք նշել ենք ի սկզբանե, այն պահից, երբ 1995 թ. հուլիսի 5-ին ընտրվեց: Այո, այժմ օդում անընդհատ զգվում է խնդրի հանգուցալուծումը, եւ նախագահական ընտրությունների ընթացքում, ես՝ իբրեւ թեկնածու, իմ ծրագրում նշել էի, որ Հայաստանին անհրաժեշտ է նոր խորհրդարան: Բայց, համոզված եմ, որ ԱԺ այս կազմի գործունեությունը չպետք է սահմանափակվի միայն ընտրական օրենսգրքի ընդունմամբ: Մենք համոզվել ենք, որ ԱԺ-ի հետ միաժամանակ ընդունված Սահմանադրությունն իրեն սպառել է: Վերանայել Սահմանադրության լեգիտիմ կամ ոչ լեգիտիմ լինելու բանավեճից: Պետք է իրատես լինել. գործող Սահմանադրությամբ շատ եւ շատ հարցեր չեն լուծվում: Հատկապես վիճելի է իշխանության տարբեր թեւերի հարաբերակցությունը՝ նախագահ-խորհրդարան-կառավարություն: Մենք միանշանակ այն համոզման ենք, որ նորընտիր նախագահը պետք է լիազորությունների վերաբաշխում կատարի, դատելով պրն Քոչարյանի հետ մեր զրույցներից՝ նա համակարծիք է: Նախագահի լիազորությունները պետք է սահմանափակվեն եւ վերաբաշխվեն Ազգային ժողովի, նաեւ կառավարության միջեւ: Ընդ որում, նոր լիազորությունները ենթադրում են մեծ պատասխանատվություն:

– Ուրեմն, խորհրդարանը պետք է նախաձեռնողը լինի՞ սահմանադրական փոփոխությունների:

– Այո, խորհրդարանի այս կազմը պետք է դառնա սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովի հիմք: Քաղաքական ուժերի այն վերադասավորումը, որը կատարվել է, կնպաստի դրան: Հետաձգել սահմանադրական փոփոխությունները, ուղղակի նշանակում է ստեղծել հիմքեր, որ 1999 թ. մենք ունենանք նույն որակի խորհրդարան, ինչ այժմ: Հենց այս ԱԺ-ի օրոք պետք է ձեռնամուխ լինել Սահմանադրության փոփոխությանը:

– ՀԿԿ խմբակցությունը ԱԺ նախագահ Խտրով Հարությունյանի հետ քննարկե՞լ է այս նախաձեռնության պատասխանատվությունը: Դեռեւս անցյալ նստաշրջանում ՀԿԿ-ն փորձեց օրենսդրական նախաձեռնություն ներկայացնել՝ սահմանադրական փոփոխություններով, բայց հարցադրումը մերժվեց:

– Մենք հանդիպել ենք նրա հետ, եւ առաջարկը հնչել է: Հայկոմկուսը պատրաստ է ներկայացնելու սահմանադրական փոփոխությունների իր նախագիծը, այսօր իրավիճակը փոփոխվել է:Պետք է լուրջ վերլուծել, թե ինչ տեղի ունեցավ հունվարի կեսերից մինչեւ այժմ ընկած ժամանակահատվածում: Հայաստանում բացակայում է բարձրագույն մի այնպիսի ատյան, ինչպիսին Սահմանադրական դատարանն է, վերջինս մեզանում գրեթե ծաղրի առարկա է դարձել: Նախկինում այն, ինչ վերապահված էր շարքային իրավախորհրդատուին՝ դրոշմակնիք դնել, վերապահվել է ՍԴ: Դրա համար նրանք մի ողջ շենք են զբաղեցնում, գեղեցիկ համազգեստներով թատերական նիստեր գումարում: Գործող Սահմանադրությամբ ՍԴ դիմելու իրավունքից զրկված են արդարացնում, տեղական ինքնակառավարման մարմինների՝ ավագանու եւ համայնքապետերի լիազորություններն անորոշ են, եւ պարզ չէ, թե վերահսկողության գործառույթը ում է վերապահված:

– Կարծում եք, որ մարզպետները եւ քաղաքապետները պետք է ընտրվի պաշտոներ լինե՞ն:

– Այո՛, կամ էլ դրանց փոխարեն ստեղծվեն համապատասխան մարմիններ խորհուրդների օրինակով: Քաղաքական-կուսակցական համակարգի պայմաններում դրանք բոլորովին էլ նման չեն լինի նախկին խորհուրդներին, որոնք ընդամենը կոմկուսի կցորդն էին: Այնտեղ կլինեն դաշնակցականներ, կոմունիստներ, հիշական եւ առաջ մղելով կուսակցական մոտեցումները՝ կնպաստեն ժողովրդի պրոբլեմների լուծմանը:

– Իսկ ո՞րն եք համարում առավել հրատապ սահմանադրական փոփոխությունը:

– Նախագահի լիազորությունների սահմանափակումը: Այսօր մենք նոր կառավարություն ենք կազմում: Նշանակվել է նոր վարչապետ, եւ որքան անհեթեթ է, երբ այդ վարչապետը նշանակվել է միանձնյա՝ առանց քաղաքական խորհրդակցությունների, առանց ԱԺ-ի վավերացման: Խոսում ենք ելցինի ամբողջատիրության մասին, սակայն նրան գերազանցել ենք: Հիշենք անցյալը, երբ խորհրդարանի ընտրություններից երեք օր առաջ նշանակվեց Հրանտ Բագրատյանը եւ նրա կառավարության կազմը: Դա ուղղակի քամահրանք էր ընտրվի օրենսդիր մարմնին, որն ի պաշտոնե կառավարության գործունեության վերահսկողը պետք է լինի:

– Արմեն Դարբինյանի թեկնածության հանդեպ ՀԿԿ-ն վերապահումնե՞ր ունի:

– Ո՛չ: Հարցը չի վերաբերում անձին, թող նա լիներ, բայց այդ թեկնածությանը մենք հանգեցինք համատեղ քննարկումներից հետո: Համաձայն եմ, որ կառավարությունը պետք է լիազորություններ ունենա իրականացնելու իր ծրագիրը, բայց միաժամանակ պետք է պատասխանատվություն կրի ձախողումների համար, եւ ոչ թե վարչապետները կամ կառավարության անդամները վերջում հայտարարեն, թե մենք պատասխանատվություն չենք կրում, ամեն ինչի նախաձեռնողը եւ պատասխանատուն նախագահն է: Այսպիսով, առաջնահերթ պետք է փոփոխել նախագահ-ԱԺ, նախագահ-վարչապետ եւ ՍԴ-ին վերաբերող սահմանադրական նորմերը:

Սահմանադրության խմբագրումից հետո իրոք պետք չէ արհեստականորեն ձգձգել եւ երկարացնել այս ԱԺ-ի կյանքը: Մինչեւ տարեվերջ մենք պետք է ձեռնամուխ լինենք նոր ընտրությունների:

– Նոր խորհրդարանում ձեր կանխատեսմամբ ձախ ուժերն ավելի մեծ ներկայություն եւ նոր առաջնորդներ կունենա՞ն, ինչպես Կարեն Դեմիրճյանը:

– Համոզված եմ, այսօր քաղաքական ուժերի լուրջ վերադասավորություն է կատարվել եւ ընդգծվել է ձախ ուժերի դերակատարումը:

Կարեն Դեմիրճյանը, կարծում եմ, ձախ ուժերի քաղաքական առաջնորդ չի լինի: Ժամանակը ցույց կտա, թե որքանով էր նա ինքուրույն իր թեկնածությունն առաջադրելիս: Ես նրան ճանաչում եմ՝ նա բնավորությամբ զինվոր չէ: Բացի այդ, նոր ընտրությունները կծտեն նաեւ ՀՀՇ դիրքը, «մեռած է՝ թաղած չէ, թե՞...»

– Ոչ մեռած է, ոչ թաղած:

– (Ծիծաղում է) Նոր նախագահ է ընտրվել, որը պետք է 5 տարի աշխատի, մենք իհարկե հուսով ենք, որ նա

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«Մինչեւ տարեվերջ պետք է ձեռնամուխ լինենք նոր ընտրությունների»

Եզրակացնում է Սերգեյ Բաղալյանը

ՀԿԿ առաջին քարտուղար եւ նախագահական արտահերթ ընտրություններում Հայկոմկուսի թեկնածու Սերգեյ Բաղալյանը լավատես էր. հետախուզական մեր այն հարցին. թե ինչպես է գնահատում զարգացումները. պատասխանեց. «Ինչ կատարվում է. կատարվում է ի բարին»: Այս հուսադրող գնահատականը հնչեց ՀԿԿ խմբակցության ԱԺ աշխատասենյակում. երբ խորհրդարանում ամենահաճախ հանդիպող կողակցությունները վերաբերում էին ԱԺ վաղաժամկետ լուծարմանը. Սահմանադրության հնարավոր փոփոխություններին եւ նոր կառավարության հետ խորհրդարանի հարաբերություններին:

մոզված եմ, որ ԱԺ այս կազմի գործունեությունը չպետք է սահմանափակվի միայն ընտրական օրենսգրքի ընդունմամբ: Մենք համոզվել ենք, որ ԱԺ-ի հետ միաժամանակ ընդունված Սահմանադրությունն իրեն սպառել է: Վերանայել Սահմանադրության լեգիտիմ կամ ոչ լեգիտիմ լինելու բանավեճից: Պետք է իրատես լինել. գործող Սահմանադրությամբ շատ եւ շատ հարցեր չեն լուծվում: Հատկապես վիճելի է իշխանության տարբեր թեւերի հարաբերակցությունը՝ նախագահ-խորհրդարան-կառավարություն: Մենք միանշանակ այն համոզման ենք, որ նորընտիր նախագահը պետք է լիազորությունների վերաբաշխում կատարի, դատելով պրն Քոչարյանի հետ մեր զրույցներից՝ նա համակարծիք է: Նախագահի լիազորությունները պետք է սահմանափակվեն եւ վերաբաշխվեն Ազգային ժողովի, նաեւ կառավարության միջեւ: Ընդ որում, նոր լիազորությունները ենթադրում են մեծ պատասխանատվություն:

– Ուրեմն, խորհրդարանը պետք է նախաձեռնողը լինի՞ սահմանադրական փոփոխությունների:

– Այո, խորհրդարանի այս կազմը պետք է դառնա սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովի հիմք: Քաղաքական ուժերի այն վերադասավորումը, որը կատարվել է, կնպաստի դրան: Հետաձգել սահմանադրական փոփոխությունները, ուղղակի նշանակում է ստեղծել հիմքեր, որ 1999 թ. մենք ունենանք նույն որակի խորհրդարան, ինչ այժմ: Հենց այս ԱԺ-ի օրոք պետք է ձեռնամուխ լինել Սահմանադրության փոփոխությանը:

– ՀԿԿ խմբակցությունը ԱԺ նախագահ Խտրով Հարությունյանի հետ քննարկե՞լ է այս նախաձեռնության պատասխանատվությունը: Դեռեւս անցյալ նստաշրջանում ՀԿԿ-ն փորձեց օրենսդրական նախաձեռնություն ներկայացնել՝ սահմանադրական փոփոխություններով, բայց հարցադրումը մերժվեց:

– Մենք հանդիպել ենք նրա հետ, եւ առաջարկը հնչել է: Հայկոմկուսը պատրաստ է ներկայացնելու սահմանադրական փոփոխությունների իր նախագիծը, այսօր իրավիճակը փոփոխվել է:Պետք է լուրջ վերլուծել, թե ինչ տեղի ունեցավ հունվարի կեսերից մինչեւ այժմ ընկած ժամանակահատվածում: Հայաստանում բացակայում է բարձրագույն մի այնպիսի ատյան, ինչպիսին Սահմանադրական դատարանն է, վերջինս մեզանում գրեթե ծաղրի առարկա է դարձել: Նախկինում այն, ինչ վերապահված էր շարքային իրավախորհրդատուին՝ դրոշմակնիք դնել, վերապահվել է ՍԴ: Դրա համար նրանք մի ողջ շենք են զբաղեցնում, գեղեցիկ համազգեստներով թատերական նիստեր գումարում: Գործող Սահմանադրությամբ ՍԴ դիմելու իրավունքից զրկված են արդարացնում, տեղական ինքնակառավարման մարմինների՝ ավագանու եւ համայնքապետերի լիազորություններն անորոշ են, եւ պարզ չէ, թե վերահսկողության գործառույթը ում է վերապահված:

– Կարծում եք, որ մարզպետները եւ քաղաքապետները պետք է ընտրվի պաշտոներ լինե՞ն:

– Այո՛, կամ էլ դրանց փոխարեն ստեղծվեն համապատասխան մարմիններ խորհուրդների օրինակով: Քաղաքական-կուսակցական համակարգի պայմաններում դրանք բոլորովին էլ նման չեն լինի նախկին խորհուրդներին, որոնք ընդամենը կոմկուսի կցորդն էին: Այնտեղ կլինեն դաշնակցականներ, կոմունիստներ, հիշական եւ առաջ մղելով կուսակցական մոտեցումները՝ կնպաստեն ժողովրդի պրոբլեմների լուծմանը:

– Իսկ ո՞րն եք համարում առավել հրատապ սահմանադրական փոփոխությունը:

– Նախագահի լիազորությունների սահմանափակումը: Այսօր մենք նոր կառավարություն ենք կազմում: Նշանակվել է նոր վարչապետ, եւ որքան անհեթեթ է, երբ այդ վարչապետը նշանակվել է միանձնյա՝ առանց քաղաքական խորհրդակցությունների, առանց ԱԺ-ի վավերացման: Խոսում ենք ելցինի ամբողջատիրության մասին, սակայն նրան գերազանցել ենք: Հիշենք անցյալը, երբ խորհրդարանի ընտրություններից երեք օր առաջ նշանակվեց Հրանտ Բագրատյանը եւ նրա կառավարության կազմը: Դա ուղղակի քամահրանք էր ընտրվի օրենսդիր մարմնին, որն ի պաշտոնե կառավարության գործունեության վերահսկողը պետք է լինի:

– Արմեն Դարբինյանի թեկնածության հանդեպ ՀԿԿ-ն վերապահումնե՞ր ունի:

– Ո՛չ: Հարցը չի վերաբերում անձին, թող նա լիներ, բայց այդ թեկնածությանը մենք հանգեցինք համատեղ քննարկումներից հետո: Համաձայն եմ, որ կառավարությունը պետք է լիազորություններ ունենա իրականացնելու իր ծրագիրը, բայց միաժամանակ պետք է պատասխանատվություն կրի ձախողումների համար, եւ ոչ թե վարչապետները կամ կառավարության անդամները վերջում հայտարարեն, թե մենք պատասխանատվություն չենք կրում, ամեն ինչի նախաձեռնողը եւ պատասխանատուն նախագահն է: Այսպիսով, առաջնահերթ պետք է փոփոխել նախագահ-ԱԺ, նախագահ-վարչապետ եւ ՍԴ-ին վերաբերող սահմանադրական նորմերը:

Սահմանադրության խմբագրումից հետո իրոք պետք չէ արհեստականորեն ձգձգել եւ երկարացնել այս ԱԺ-ի կյանքը: Մինչեւ տարեվերջ մենք պետք է ձեռնամուխ լինենք նոր ընտրությունների:

– Նոր խորհրդարանում ձեր կանխատեսմամբ ձախ ուժերն ավելի մեծ ներկայություն եւ նոր առաջնորդներ կունենա՞ն, ինչպես Կարեն Դեմիրճյանը:

– Համոզված եմ, այսօր քաղաքական ուժերի լուրջ վերադասավորություն է կատարվել եւ ընդգծվել է ձախ ուժերի դերակատարումը:

Կարեն Դեմիրճյանը, կարծում եմ, ձախ ուժերի քաղաքական առաջնորդ չի լինի: Ժամանակը ցույց կտա, թե որքանով էր նա ինքուրույն իր թեկնածությունն առաջադրելիս: Ես նրան ճանաչում եմ՝ նա բնավորությամբ զինվոր չէ: Բացի այդ, նոր ընտրությունները կծտեն նաեւ ՀՀՇ դիրքը, «մեռած է՝ թաղած չէ, թե՞...»

– Ոչ մեռած է, ոչ թաղած:

– (Ծիծաղում է) Նոր նախագահ է ընտրվել, որը պետք է 5 տարի աշխատի, մենք իհարկե հուսով ենք, որ նա

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Հայկոմկուսի տարօրինակ դիրքորոշումը

Սերգեյ Բաղալյանի անընդունելի առաջարկը նախագահ Ռոբերտ Քոչարյանին

«Ազգի» ապրիլի 16-ի համարում գործընկերուհիս Նարինե Դիլբարյանը, ընթեցողներին տեղեկացնում էր, թե Հայկոմկուսի ղեկավար Սերգեյ Բաղալյանը «բավական վտանգավոր» է բնորոշել, իր բառերով, «Ռոբերտ Քոչարյանին պաշտպանող որոշ կուսակցությունների ձգտումը նախագահին կից կուսակցական խորհուրդ ստեղծելու ուղղությամբ», դա դիտելով իբրեւ խորհրդարանին զուգահեռ եւ «թեկուզեւ այս վիճահարույց Սահմանադրության շրջաններից դուրս» նոր կառույց ձեւավորելու փորձ: Դրա փոխարեն Բաղալյանը նախագահ Քոչարյանին առաջարկել է «ընդլայնել Անվտանգության խորհրդի կազմը ի հաշիվ 5 տոկոսի սահմանագիծը հասած ՀՀ նախագահի թեկնածուների՝ Կարեն Դեմիրճյան, Վազգեն Մանուկյան, Սերգեյ Բաղալյան, Պարույր Հայրիկյան»:

Հայկոմկուսի ղեկավարի այս դիրքորոշումն անընդունելի է մի քանի պատճառներով.

1. ՀՀ նախագահին կից կուսակցությունների խորհուրդ ստեղծելու «ձգտումը» չի բխում... կուսակցություններից: Այստեղ Հայկոմկուսի ղեկավարը, կամա թե ակամա, մեղանչում է ճշմարտության դեմ: Այդ նախաձեռնությունը կամ դրա գաղափարը պատկանում է նախեւառաջ պրն Քոչարյանին: Դեռեւս նախընտրական շրջանում, հանդես գալով իբրեւ ՀՀ նախագահի թեկնածու, Ռոբերտ Քոչարյանը քանիցս հրապարակավ արտահայտել է իր այդ ցանկությունը: Ըստ իս միանգամայն տրամաբանված պատճառաբանությամբ: Նա նշում էր, որ մեր կուսակցությունները, հատկապես ընդդիմադիրները, չեն պատկերացնում պետական կարեւորության հարցերը կամ, իր բառերով, «վատ գիտեն» իրականությունը: Երեկվա նախագահի թեկնածուն եւ այսօրվա նախագահը, իմ կարծիքով միանգամայն իրավացիորեն, ենթադրում էր, որ համապատասխան թույլատրելի տեղեկատվություն ունենալու դեպքում շատ կուսակցություններ բազմաթիվ հարցերում կարող են վերանայել իրենց ընդդիմադիր կեցվածքը, իսկ դա չի կարող չնպաստել իշխանություններ-ընդդիմություն, իշխանություններ-հասարակություն հարաբերությունների նորմալացմանը, հասարակական համաձայնության մթնոլորտի ձեւավորմանն ու երկրի ներսում կայունության պահպանմանը: Էլ սրա ի՞նչն է «վտանգավոր»:

2. Նախագահ Քոչարյանի առաջարկած «կուսակցությունների խորհուրդը» ամենեւին մի նոր պետական կառույց չէ, առավել եւս «Սահմանադրության շրջանակներից դուրս» եւ այն էլ՝ «խորհրդարանին զուգահեռ» գործող: Իմ պատկերացմամբ, դեռեւս նախընտրական քարոզարշավի ընթացքում Ռոբերտ Քոչարյանն անշեղորեն հասկացնում էր, որ դա լինելու է զուտ խորհրդակցական մարմին, որն օժտված չի լինելու պետական նշանակության որոշումներ ընդունելու, նախագահին որեւէ բան պարտադրելու իրավասություններով: Ավելի շուտ, դա կուսակցություններին, առավել եւս ընդդիմադիր կուսակցություններին հնարավորություն է տալու անմիջականորեն նախագահին ներկայացնել իրենց տեսակետները պետական կյանքի ցանկացած հուզող հարցի առթիվ: Առնվազն զարմանալի է, որ ինքն իրեն ընդդիմադիր համարող կոմկուսի ղեկավարը դեմ է երկրի ղեկավարի հետ թեկուզեւ այդ խորհրդակցական մարմնի նիստերի ժամանակ անմիջականորեն շփվելու եւ նրան իր տեսակետները հրամցնելու հնարավորությանը: Մի՞թե ավելի լավ էր այն, որ նախորդ նախագահի պաշտոնավարության շրջանում անձամբ ինքը, պրն Բաղալյանը, Լեւոն Տեր-Պետրոսյանի ոչ այնքան վաղուցվա խոստովանությամբ, նախագահին հայտնի էր սոսկ... հեռուստէկրանից: Մի՞թե անոնրմալ երեւույթը հենց դա չէր:

3. Անհասկանալի է, թե ի՞նչ տրամաբանությամբ է Սերգեյ Բաղալյանը նախագահին առաջարկել «կուսակցությունների խորհրդի» փոխարեն ընդլայնել Անվտանգության խորհրդի կազմը, այն էլ զուտ «5 տոկոսի սահմանագիծն անցած» նախագահի նախկին թեկնածուների հաշվին: Այդ դեպքում ի՞նչ հիման վրա այդ «ընդլայնումը» չպետք է ներառի այն կուսակցություններին, եւ առաջին հերթին Դաշնակցությանն ու Ռամկավարներին, որոնք ի սկզբանե հանդես եկան Ռոբերտ Քոչարյանի թեկնածության պաշտպանությամբ եւ ընտրություններին մասնակցեցին ոչ «սեփական» թեկնածուներով: Միգուցե Սերգեյ Բաղալյանը կասկածո՞ւմ է, թե ապագա նախագահին պաշտպանած այս եւ մյուս կուսակցությունները չէի՞ն կարող իրենց նման անցնել՝ «5 տոկոսի սահմանագիծը»: Մի՞թե կա որեւէ «ծանրաչափ», որպեսզի «կշռեն» Հայկոմկուսի ղեկավարի այս առնվազն արտառոց, սակայն անվերապահորեն ենթադրվող կարծիքի համապատասխանությունն իրականությանը:

4. Վերջապես, այդ ո՞ր տրամաբանությամբ Անվտանգության խորհրդի կազմը պետք է ընդլայնվի ընդամենը 4 հոգով, որոնցից 3-ը ներկա նախագահին հստակորեն ընդդիմադիր գործիչներ են (Կարեն Դեմիրճյան,Վազգեն Մանուկյան, Սերգեյ Բաղալյան), եւ միայն մեկը (Պարույր Հայրիկյան) բավական մեծ վերապահումով կարող է նրա «զինակիցը» կոչվել: Չէ՞ որ Անվտանգության խորհուրդը նույնպես նախագահին կից խորհրդակցական մարմին է, ընդսմին գործող Սահմանադրության մեջ նրա մասին, որքան հիշում եմ, նույնպես որեւէ խոսք չկա: Ինչո՞ւ պետք է նախագահին կից մեկ խորհրդակցական մարմնում գերակշռեն նրա ընդդիմադիրները, եւ նախագահը իրավունք չունենա ստեղծելու մեկ այլ, ըստ էության հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմին, ընդսմին առանց պետական գանձարանից ափսաված վճարելու որեւէ մեկին, որի կազմում իր հայեցողությամբ ընդգրկի ոչ միայն ընդդիմադիրներին, այլեւ իրեն պաշտպանողներին, եթե նույնիսկ նրանք նախագահական ընտրություններում սեփական թեկնածուով հանդես չեն եկել կամ էլ «5 տոկոսի սահմանագիծը» չեն անցել:

Հուսով եմ, որ նախագահ Ռոբերտ Քոչարյանը կմերժի Սերգեյ Բաղալյանի առաջարկը, եւ հետ չի կանգնի իր նախընտրական խոստումից, մանավանդ, որ ՀՀ նախագահին կից առայժմ դեռ ենթադրվող «կուսակցական խորհուրդը» բացի դրականից որեւէ այլ ազդեցություն չի կարող ունենալ մեր հասարակական կյանքի վրա:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԻՐԱՆ

Պահպանողականները կրեցին եւս մեկ պարտություն

Իրանի իսլամական գաղափարախոսության դաշտում առկա քաղաքական պայքարը, որը ծայր է առել դեռեւս 1996 թ. մարտի խորհրդարանական ընտրությունների նախօրեին, 1998 թ. ապրիլի 4-ից Թեհրանի քաղաքապետ Ղոլամհոսեյն Քարբաշիի ձերբակալությամբ, որը մեղադրվել էր նյութական չարաշահումների, հափշտակության մեջ, բացարձակ առճակատման բնույթ կրելով վերածվեց ներքաղաքական լուրջ ճգնաժամի, որը Իրանի Իսլամական Հանրապետության շուրջ 20-ամյա պատմության մեջ աննախադեպ է:

Իրանում իսլամական համակարգի շրջանակներում գործում են հիմնականում երեք քաղաքական հոսանքներ ա) պահպանողականներ, բ) ձախեր, գ) չափավորականներ: Պահպանողականը կրոնա-քաղաքական ուժեղ հոսանք է, որն իսլամական հեղափոխության հաղթանակից ի վեր ձեւավորվել է «Զամեյե Ռուհանիյաթե Սոբարեգ» (մարտնչող հոգեւորականության հասարակություն) կազմակերպության շուրջ: Այս հոսանքը 90-ական թվականների սկզբից, թերեւս հեղափոխության առաջնորդ Էմամ Խոմեյնիի վախճանից հետո աստիճանաբար զորացավ, իսկ 1992 թ. խորհրդարանական ընտրություններին նրան հաջողվեց ձախ ուժերին, որոնք հեղափոխությունից հետո տնօրինում էին երկրի իշխանության կարեւոր լծակներ, դուրս մղել ասպարեզից՝ օգտագործելով 47-րդ գումարման խորհրդարանում որոշիչ մեծամասնություն: Եվ եթե հաշվի առնենք նաեւ, որ Իրանի նախկին նախագահ Ալի Ակբար Ռաֆսանջանին (1989-97 թթ.) «Զամեյե Ռուհանիյաթե Սոբարեգի» անդամ էր, կարելի է ասել, որ 1992 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքով պահպանողականները տիրեցին երկրի իշխանության բոլոր լծակները:

Չափավորական կամ «մոդեռն» աջեր: Ի սկզբանե պահպանողականների եւ նրանց հարող ուժերի շարքերում նկատելի է նաեւ չափավորական թեւի առկայություն, որը 1989 թ-ից նախկին նախագահ Ռաֆսանջանիի «Տնտեսական հավասարակշռություն» ծրագրի շուրջ համախմբված տեխնոկրատների հետ ձեւավորեց չափավորական կամ «մոդեռն» աջերի նոր հոսանքը, որն ավելի ուշ հակադրվեց պահպանողականներին եւ անջատվեց նրանցից: 1996 թ. հունվարի 17-ին «մոդեռն» աջերը հանդես եկան հայտարարությամբ, որը ստորագրել էին 10 նախարարներ, 4 փոխնախարարներ, Իրանի Կենտրոնական բանկի տնօրենը եւ Թեհրանի քաղաքապետը, որը համարվում է կառավարության անդամ: Հայտարարությունը ստորագրած խումբը ինքնակոչվեց «Իրանի կառուցողականության սպասավորներ» (ԻԿՍ) եւ խորհրդարանի 5-րդ գումարման ընտրություններին մասնակցեց հենց այդ անվամբ: Ձեւավորվելուց անմիջապես հետո այս խումբը դարձավ պահպանողականների սուր քննադատությունների թիրախը: 1996 թ. հունվարի 30-ին խումբը հանդես եկավ 2-րդ հայտարարությամբ, որը ստորագրել էին խմբի վեց մնացած անդամները, որոնք էլ ներկայացրին այս խմբի թեկնածուներին: ԻԿՍ-ի կենտրոնական դեմքերն էին Իրանի մշակույթի եւ իսլամական առաջնորդության նախարար, կառավարության խոսնակ Աբաոլա Մոհաջերանին եւ Թեհրանի քաղաքապետ Ղոլամհոսեյն Քարբաշին, որը մեծ հեղինակություն է վայելում եւ արժանացել է թեհրանցիների համակրանքին:

Չախ հոսանքը խմբավորված է «Մաջմաե Ռոհանիյունե Սոբարեգ» (մարտնչող հոգեւորականների միություն) կազմակերպության շուրջ: Ձախերը 1992 թ. խորհրդարանական ընտրությունների ճակատագրական պարտությունից հետո գրեթե խաղից դուրս մնացին: Սակայն 1996 թ. կրկին ակտիվանալով, մասնակցեցին ընտրություններին: Հիշյալ ընտրություններում, զգալի չափով նաեւ Քարբաշիի եւ Մոհաջերանիի բուռն ջանքերի շնորհիվ, ԻԿՍ-ը լուրջ հաջողություններ արձանագրեց, ինչը նշանակում էր պահպանողականների պարտություն, որոնք հաշվի առնելով իրենց քաղաքական ու տնտեսական ազդեցիկ լծակները, ակնկալում էին կրկին գերակշիռ մեծամասնություն ապահովել խորհրդարանում: Մինչդեռ այսօրվա դրությամբ պահպանողականների խմբակցությունը խորհրդարանում չափավորականների ու ձախերի խմբակցության համեմատությամբ փոքր տարբերությամբ է մեծամասնություն կազմում, որն էլ աստիճանաբար կրճատվում է:

Խորհրդարանական ընտրություններից հետո էլ պահպանողականների քննադատությունները ուղղված չափավորականներին, ոչ միայն չդադարեցին, այլեւ ուժգնացան, որոնք շատ հաճախ հասցեագրվում էին ԻԿՍ-ի հիմնադիրներին: 1997 թ. նախագահական ընտրարշավը, որը հիմնականում ընթանում էր պահպանողականների թեկնածու, խորհրդարանի նախագահ Ալի Ակբար Նաթեղ Նուրիի եւ չափավորականների ու ձախերի ընդհանուր թեկնածու Մոհամեդ Խաթամիի միջեւ, ավարտվեց վերջինիս փայլուն հաղթանակով: Պահպանողականները կրեցին երկրորդ լուրջ պարտությունը: Նախագահ Խաթամիի ընտրարշավի կազմակերպման ակտիվ մասնակիցներից էին Թեհրանի քաղաքապետ Քարբաշին եւ մշակույթի նախարար Մոհաջերանին, որոնց պահպանողականները չեն կարողանում ներել: Վերջիններս նախագահական ընտրություններում կրած պարտության հետ չհաշտվելով, ջանք չեն խնայում նախագահ Խաթամիի արդյունավետ գործունեությունն արգելակելու, նրա գլխավորած կառավարությանը հարվածելու ուղղությամբ: Այլ կերպ ասած, պայքարը հնի ու նորի առաջադեմի միջեւ շարունակվեց: Նախագահական ընտրություններից անմիջապես հետո Թեհրանի շուրջ 10 շրջանների քաղաքապետներ ձերբակալվեցին նյութական հափշտակության մեղադրանքով, որոնք, ինչպես հետագայում հայտնի դարձավ, կրտսերների էին ենթարկվել եւ ճնշման տակ ոչ միայն խոստովանեցին իրենց վերագրվող մեղադրանքները, այլեւ նշեցին, որ գործել են Քարբաշիի հրահանգներով: Հանգամանքը, որն առիթ հանդիսացավ վերջինիս ցուցմունքներ տալու նպատակով դատարան կանչելու, ապա նաեւ նույն մեղադրանքով ձերբակալության համար: Եվ այսպիսով, Թեհրանի 44-ամյա քաղաքապետը, հարամածայն յուրացումների եւ դրամաշնորհության դեմ պայքարի ուժեղացման օրենքի, ձերբակալվեց, ըստ որի 1-ամսյա ազատազրկումը պարտադիր է եւ անփոխարինելի: Քարբաշիի ձերբակալումը նախ հարվածի տակ էր դնում ներքին գործերի նախարար Աբդուլլահ Նուրիին, որն ի դեմ, պահպանողականների համար խիստ անցանկալի դեմքերից է, քանի որ Իրանում օրենքի համաձայն նահանգապետներին եւ քաղաքապետներին նշանակում է ներքին գործերի նախարարը, ապա հարված է նաեւ նախագահ Խաթամիին: Ուստի կառավարությունն անմիջապես հանդես գալով հայտարարությամբ, ընդգծեց, որ Քարբաշիի ձերբակալությունը արվել է քաղաքական դրդապատճառներով, միաժամանակ հայտնելով, որ կառավարությունը ազատազրկման մեջ գտնվող Քարբաշիին համարում է Թեհրանի քաղաքապետ: Վերջինիս ձերբակալումն աննախադեպ արձագանք գտավ ողջ երկրում, հասարակության լայն շրջանակներում, մամուլում եւ ՋԼՄ-ներում ընդհանրապես: Ի պատասխանություն Թեհրանի քաղաքապետի հանդեպ եկան արվեստի ու գրականության հայտնի գործիչներ, տարբեր հասարակական կազմակերպություններ, չափավորական թեւի հոգեւորականներ, ուսանողական կազմակերպություններ, որոնք ցույցեր կազմակերպելու պատրաստակամություն հայտնեցին: Քարբաշիի ձերբակալությունը ողջ երկիրը ոտքի հանեց: Ստեղծվեց ճգնաժամային իրավիճակ, ինչը բացառված չէ, որ շուտով անվերահսկելի կդառնար, հատկապես որ նախագահ Խաթամիի կառավարությունը նահանջի տեղ չուներ, քանզի այդ ուղղությամբ որեւէ քայլ հավասար է բազմամիլիոն ընտրողների վստահության կորստի, պարտության եւ դիրքերից ու սկզբունքներից նոր նահանջների:

Փաստորեն, իրադարձությունների նման զարգացման պայմաններում այլ ելք չէր մնում, քան երկրի քաղաքական ու ռազմական բարձրագույն ատյանի առաջնորդ Ալի Խամենեիի միջնորդությունը: Վերջինս նախ հանձնարարեց, որ այդ հարցը խորհրդակցությամբ լուծեն գործադիր, օրենսդիր եւ դատական իշխանությունների ղեկավարները: Խաթամին, Նաթեղ Նուրին եւ Յազդին, ինչպես նաեւ Վարչակարգի շահերը բնորոշող խորհրդի նախագահ Ռաֆսանջանին: Ինչն ինքնին հաղթանակ է նախագահի կողմնակիցների համար, քանզի առաջնորդի այդ քայլն ապացուցում էր, որ հարցն իրոք քաղաքական բնույթի էր: Սակայն առաջնորդի այդ միջոցառումը եւս լուրջ հաջողություն չարձանագրեց: Ուստի նախագահ Խաթամին դիմում հղեց առաջնորդ Խամենեիին, որտեղ շեշտվում է Քարբաշիի ազատ արձակման անհրաժեշտությունը: Ի վերջո ապրիլի 15-ին հեղափոխության առաջնորդի հրահանգով Թեհրանի քաղաքապետն ազատ արձակվեց, որին կողմնակիցները դիմավորեցին որպես հերոսի: Քարբաշիի ազատ արձակման առնչությամբ նշանակալից դեր ուներ նաեւ Վարչակարգի շահերը բնորոշող խորհրդի նախագահ Ռաֆսանջանին, որը միաժամանակ հեղափոխության առաջնորդի առաջին խորհրդականն է: Քարբաշիի ազատ արձակումը պետք է գնահատել նախ որպես պահպանողականների հերթական պարտություն, որոնց թերեւս հանկարծակիի բերեց հասարակության բուռն արձագանքը: Այն պարտություն էր նաեւ դատական իշխանությունների եւ անձամբ Յազդիի համար, թեեւ Քարբաշիի գործը կարճված չէ եւ ընթացքի մեջ կարող է դրվել ցանկացած ժամանակ:

ԷՄՄԱ ԲԵԳԻՋԱՆՅԱՆ

ՏԱՐԱՇՍՇՐՋԱՆ

ԱՄՆ-ը կֆինանսավորի՞ Թուրքմենստան-Ադրբեջան ստորջրյա խողովակաշարի կառուցումը

Թուրքմենստանի նախագահ Նիյազովը պաշտոնական այցով շուտով պետք է մեկնի Միացյալ Նահանգներ: Վաշինգտոնը որոշել է մինչ այդ հանդես գալ միջնորդի դերում եւ հարթել Ադրբեջանի ու Թուրքմենստանի վեճերը Կասպից ծովի կարգավիճակի շուրջ: Ամերիկացիներն առաջարկում են կառուցել Կասպից ծովի հատակով անցնող մի խողովակաշար, որը թուրքմենական գազը Ադրբեջանի տարածով կհասցնի Արեւմուտք: Ամերիկացիները նշում են, որ այդ ծրագիրը երկու երկրների համար էլ փոխշահավետ կլինի: Թուրքմենստանը կկարողանա արտահանել իր գազը, իսկ Ադրբեջանը կստանա տարանցման համար վճարվող շահույթները: ԱՄՆ-ի դեսպան Սթենլի Էսկուդերոն Հեյդար Ալիեւին էր փոխանցել Մ. Նահանգների փոխնախագահ Ալբերտ Գորի ուղերձը, որում Սպիտակ տունը խնդրում էր Ադրբեջանին աջակցել խողովակաշարի կառուցմանը: Շորեքշաբթի օրը Հեյդար Ալիեւը հայտարարեց, որ Բաքուն, ելնելով նաեւ ռազմավարական նկատառումներից, իր համաձայնությունն է տալիս այդ ստորջրյա խողովակաշարի կառուցմանը: Բախվի փորձագետների կարծիքով, Ալբերտ Գորի նամակը վկայում է, որ ամերիկյան կողմն իր վրա է վերցնում խողովակաշարի կառուցման ֆինանսական եւ քաղաքական պատասխանատվությունը: Բանն այն է, որ այդ ծրագրին դեմ է Մոսկվան: Ռուսաստանի առաջին փոխարտգործնախարար Բորիս Պաստուխովն, օրինակ, վերջերս Բաքվում հայտարարեց, որ Կասպից ծովի հատակով խողովակաշար անցկացնելու նախաձեռնողները պարզապես «էկոլոգիական բանդիտներ են»: Ռուսաստանի մտահոգությունը հասկանալի է: Այնպես որ, կասպյան նավթային հարստություններով գայթակղված Վաշինգտոնը ստորջրյա գազամուղի հարցը պետք է համաձայնեցնի նաեւ Մոսկվայի հետ: Իսկ թե ինչպես է Արեւմուտքը շահագրգռված Կասպիցով, վկայում են Ղազախստան այս շաբաթ այցելած ԵԱՀԿ-ի նախագահ Բրոնիսլավ Գերեմեկը, Բելգիայի վարչապետը եւ ԱՄՆ-ի միջգերատեսչական կառավարական հանձնաժողովի անդամները: BBC-ի տարածաշրջանային թղթակից Վլադիմիր Օդաեւը վկայում է, որ Գերեմեկը չափազանց մտահոգված էր, քանի որ եվրոպական փորձագետների կարծիքով, նավթով հարուստ կասպյան տարածաշրջանը կարող է դառնալ երկարաժամկետ հակամարտությունների գոտի: ԵԱՀԿ-ի նախագահը Ղազախստանի ղեկավարության հետ քննարկել է Կասպիցի կարգավիճակի եւ տարածաշրջանային անվտանգության հարցերը:

Բրոնիսլավ Գերեմեկը դրականորեն է գնահատել Կենտրոնական Ասիայում գործող խաղաղապահ գումարտակի ստեղծման փաստը, համարելով դա «չափազանց հետաքրքիր նախաձեռնություն»: Հետաքրքիր է, որ ի տարբերության ԵԱՀԿ-ի ղեկավարի, ԱՄՆ-ի մասնագետները համարում են, որ կասպյան նավթային պաշարները, ընդհակառակը, կայունացնող գործոն են:

Պատրաստեց
ԳԱՐԻԳՈՐ ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆԸ

Մաալուլա գողտրիկ քաղաքը Սիրիայում



Սիրիայի Արաբական Հանրապետության մայրաքաղաք Դամասկոսից 45 կմ հեռու, Դամասկոս-Հալեպ մայրուղու արեւմտյան կողմում, ծովի մակերեսից 1500 մետր բարձրության վրա է գտնվում Մաալուլա քաղաքը, որն իր յուրահատուկ դիրքի շնորհիվ կարծես հսկում է ամբողջ տեղանքը, ականատես դառնում պատմության ընթացքին եւ ժամանակի իրադարձություններին: Բնության գեղեցկությունն անմիջապես այցելուի ուշադրությունն է գրավում: Վեհաշուք լեռներով շրջապատված վայրը առաջինն ու միակն է աշխարհում, որտեղ դեռեւս հնչում է արամերենը, այն նույն լեզուն, որով խոսում էր ամբողջ Մերձավոր Արեւելքը սկսած մ. թ. ա. առաջին դարից մինչեւ մ. թ. 7-րդ դարը, նաեւ այն լեզուն, որով Հիսուս Քրիստոսը քարոզում էր: Շատ բան այնտեղ հիշեցնում է անցյալը, երբ Մաալուլան պատկանում էր Հռոմի թագավորությանը: Ապա հռոմեական շրջանում քաղաքը անվանվել է Սելիոկոպոլիս, այնուհետեւ բյուզանդական շրջանում նա կարեւոր կրոնական դեր է խաղացել՝ դառնալով եպիսկոպոսական կենտրոն մ. թ. 4-րդ դարից մինչեւ 17-րդ դարը:

Մաալուլայում է գտնվում պատմական հուշարձանների մի ամբողջ շարք, Ս. Սարգիս վանքի գլխավորությամբ, որն այդպես է կոչվել սիրիացի հեծելազորայինի անունով, որը 297 թվին Մախիմանուսի թագավորության ժամանակ զոհվել է: Նրա հիշատակի տոնակատարությունը նշվում է ամեն տարի հոկտեմբերի 7-ին:

Սիցիլիա. Սեւամորթ արքի վերադարձը

Պալերմոյի քաղաքագլուխ Լեոլուկա Օրլանդոն ձախ հայացքների տեր քաղաքական գործիչ է եւ ջերմեռանդ կաթոլիկ: Սիցիլիայում ցեղախտության ծավալումը կանխելու նպատակով նա մարտի վերջերին որոշեց կղզում վերականգնել կաթոլիկ եկեղեցու սրբերից մեկի՝ սեւամորթ Բենեդետտո Մասսարիի պաշտամունքը: 16-րդ դարում Սիցիլիայի Մեսսինա քաղաքի մոտակայքում ծնված Բենեդետտո Մասսարին աֆրիկացի սեւամորթ ստրուկի որդի էր: Պալերմոյի մենաստաններից մեկի սպասավոր Բենեդետտոն անգրաճանաչ էր, բայց մեծ հարգանք էր վայելում բուժելու ձիրքի եւ աստվածաբանական ամենաբարդ առեղծվածները լուծելու կարողության շնորհիվ: 1652 թ. Պալերմոյի սենատը նրան հռչակեց քաղաքի հովանավոր սրբերից մեկը: Կաթոլիկ եկեղեցին Բենեդետտոյին սրբերի շարքին դասեց 1870 թ.:

Պալերմոյի քաղաքագլուխ Լ. Օրլանդոն այս պատմությունը հայտնաբերեց քաղաքի արխիվներում: Նա անմիջապես հասկացավ, որ սեւամորթ սրբի պաշտամունքի վերականգնումը թույլ կտա Սիցիլիայում եւ ամբողջ Իտալիայում ուժեղացնել պայքարն այլատյացության դեմ: Գերմանիայից, Ֆրանսիայից եւ Մեծ Բրիտանիայից հետո Իտալիան եվրոպական չորրորդ երկիրն է ներգաղթյալների թվով, որոնց մեծամասնությունը սեւամորթներ եւ մաղրիբցիներ են:

«ԼՈՒՍ»

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Առաջին անգամ գյուղի գրադարանում ձեռխ ընկավ կապույտ կազմով, ձյան փաթիլներով պատկերված մի սիրուն գրքույկ՝ Գեղամ Սարյանի «Մանուկն ու ձյունը»: Տողերը սահուն էին, ասես հոսում էին, գրված էր կենդանի, խոսակցական լեզվով: Իսկույն տպավորվեց: Մի քանի անգամ կարդալուց հետո անմիջապես բերանացի արեցի չորս վանկանի չափով գրված ձմռան գողտրիկ երկխոսություն-պատկերը:

Տարիներ անց մեր դասարանի աշակերտները մրցում էին, թե ով ավելի արտահայտիչ կարդալանի «Գյուլնարա» հիասքանչ պոեմը: Պոեմի թեւավոր ու անզուգական պատկերները ասես համահունչ էին հերոսուհու մասներով գործած գորգերի գունագեղ ու կախարդական հյուսվածքների հետ:

Առաջին իսկ հանդիպումից իմ բախտը բերեց. Սարյանի ասելով, նրան «դուր եկավ իմ անմիջականությունը» ու դարձանք բարեկամներ: Այդ բարեկամությունն ավելի խորացավ, քանի որ Սարյանը «Խորհրդային Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ էր եւ մենք հաճախ էինք հանդիպում: Մեր երկարամյա բարեկամությունից ներկայացնում եմ մի քանի տող:

Գեղամ Սարյանի տանն էի: Ծննդյան 70-ամյակի առթիվ հոդված պիտի գրեի: Դեմքը գունատ էր, նիհար, միայն մազերն էին գեղեցիկ, հդարս մնացել:

– Ուզում եմ Ձեր մասին հոդված գրել, ասացի ես:

– Է՜, ինչ ասեմ, շնորհակալ եմ: Իմ կյանքը քեզ ծանոթ է, գրքերն էլ ունես, ազաս գրիր ինչ սիրտդ թելադրում է: Գրելուց հետո, եթե հարցեր լինեն, զանգահարիր:

Նվիրեցի իմ «Վարդեր եւ փշեր» ժողովածուն, որի վրա մակագրել էի. «Միշտ բարի, միշտ սիրելի իմ լավ բարեկամ Գեղամ Սարյանին. հդարս նայիր վարդեն լեռան գագաթին, թող ջահել մնաս դու միշտ կյանքում, քանզի սարը որքան ձյունով պատի, այն հավերժ մնում է վեհ ու կանգուն»: Կարդաց, զգացվեց ու մեղմ ասաց.

– Վարդեր, լավ է, բայց որ փշեր էլ կան՝ լավ չէ:

Հետո ավելացրեց՝ բայց առանց փշի էլ վարդ չկա, հաջող վերնագիր է:

«Խորհրդային Վրաստան» եւ «Կոմունիստ» (ռուսերեն) թերթերում միաժամանակ լույս տեսան իմ հոդվածները Սարյանի մասին: Թերթերը տարա նրան:

– Համեցեք, համեցեք, դուռը բացելով ասաց նա: Ո՞նց ես, հո շատ լավ չե՞ս:

– Կամաց-կամաց, վարդես, դուք ինչպե՞ս եք: «Հլա ողջ ենք», «Միշտ էլ ողջ կլինենք»:

– «Միշտ Աստվածն էլ ողջ չի լինի»: Հոդվածներն աչքի անցկացրեց. «Կեցցես, կեցցես, շնորհակալ եմ, հետո կկարդամ»:

– Ի՞նչ եք գրում, վարդես, երեւի անգգուշորեն հարցրի ես: Նա լռեց, ապա մի քիչ նեղացած ասաց. էլի գրե՞մ, ինչման գրել եմ՝ հերիք է, հերթը քոնն է, քո սերնդինը, դուք գրեք:

Ես զղջացի հարցիս համար ու զրույցը փոխելու նպատակով ասացի.

– Եգիպտոսից եմ եկել: «Այնտեղ ինձ հիշո՞ւմ են», հարցրեց:

«Բոլոր դպրոցներում՝ կահիրեում, Ալեքսանդրիայում, ձեր բանաստեղծությունները սիրում են», ասացի: Շոյվեց, կարծես նեղացածությունն անցավ, ոգեւորվեց. «Լավ է քեզ Փարավոն չեն դարձրել»: Հետո ձայն տվեց կնոջը՝ Նազիկ, Սուրենին մակագրած գիրքս բեր: Նոր գիրք է՝ «Մտերիմ էջեր», Գուրգեն Հովնանն է առաջաբան գրել: «Շատ շեղ է հրատարակվել», ասացի:

– Է, էլ չի ուրախացնում: Ջահել ժամանակ պիտի այսպես հրատարակեին, որ վայելեի, հիմա ի՞նչ...

Գեղամ Սարյանը զանգեց.

– Երեկոյան ժամը 7-ին արի մեր տուն, զրուցենք:

– Համեցեք, Գեղամը ձեզ է սպասում, դուռը բացելով ասաց տկն Նազիկը:

Սարյանը նստած էր տնային խալաթով: Մեղմ հարցրեց.

– Եկա՞ր, նստիր, ի՞նչ կա ձեզ մոտ:

– Խմբագրական հոգսեր, գրական աշխարհում նորություններ չկան, ասացի:

– Ավելի լավ է քո նոր ժողովածուից խոսենք, ասաց Սարյանը: «Երկնից երեք խնձոր ընկավ» գիրքդ ծայրից ծայր կարդացի: Հավանածներս չհավանածներից շատ են: Ժողովրդական մտածողություն կա բանաստեղծությունների մեջ, հատկապես հեքիաթներում, որը ջերմացնում է խոսքը: Դուր եկան սուտասելուկները, այդ շարքը մեծացրու: Բայց զգույշ՝ երեխաներին սուտասան չդարձնես: Կուզեի գրքիդ մասին գրել մի տեղ, բայց շատ տկար եմ: Մի քանի տող կարձիք եմ գրել, պահիր հիշատակ, էսօր կանք, վաղը չկանք: Ասացի, որ Պերեդելկինոյի գրողների տանը Պավել Անտակոլսկուն եմ հանդիպել, բարեւում էր:

– Հա, Անտակոլսկին 1935 թ. թարգմանել է իմ «Գյուլնարան»: Մեր տատիկներին էր: Նույն երեկոյին երկուսս էլ կարդացինք. ես բնագիրը, նա՝ թարգմանությունը: Շատ հայեր կային, ջերմ ընդունեցին: Մեկ էլ մի կին է գալիս շարքերի միջով: Բանաստեղծուհի Սեյրին էր, այժմ մոռացված է: Եկավ ու գրկեց ինձ, շնորհավորեց ելույթս:

Վաղ առավոտյան զանգահարեց Սարյանի կինը՝ տկն Նազիկը:

– Գեղամը շատ ծանր է, ուզում է քեզ տեսնել:

Արագ գնացի: Սարյանը պառկած էր անկողնում՝ նիհարած, սմքած, անվերջ տնքում էր:

– Վերջ, սա վերջն է, Սուրեն ջան, հազիվ ընկաց նա:

Տիկին Նազիկը ինձ մի կողմ տարավ ու վախեցած ասաց.

– Նոր տարությունը չափեցի, շատ բարձր է: Սրտի նոպա է ունեցել, գիշերը չի քնել, 10 օր է, բան չի ուտում: Գանգատվում է ու մահից է խոսում:

Նստեցի Սարյանի մահճակալի առաջ:

– Ի՞նչ կա սփյուռքում, թույլ հարցրեց:

– Վիլյամ Սարոյանն է եկել:

– Սարոյանին տեսել եմ 1935 թվականին: Գրողների տանը ընդունելություն էր: Գնացի:

Սարոյանը Թոթովենցի հետ նստած էր սեղանի ծայրը:

– Ամեն մարդ մի բանի պիտի հավատա, ասաց Սարոյանը:

– Մենք վաղվա օրվան հավատում ենք, ասաց Չարենցը:

– Լավ կլինի Սարոյանը վերադառնալուց հետո գրի ճիշտը, իր տեսածը, ասաց Հարություն Մկրտչյանը: Սարոյանը նեղացավ. «Ես տեսածս կգրեմ միշտ»:

Սեղանը սառեց, ջերմությունը կորավ:

– Էդ ձախորդ քաղաքագետն ինչո՞ւ փչացրեց մեր խնջույքը, մի անգամ հիշեց Դրաստամատ Տեր-Սիմոնյանը:

1976 թ. նոյեմբերի 17-ին Գեղամ Սարյանի թաղումն էր Ֆիլհարմոնիայի մեծ դահլիճից: Գերեզմանոցում խոսեցին Վարդգես Պետրոսյանը, Հրաչյա Հովհաննիսյանը: Սարյանի մահից հետո մի քանի անգամ այցելեցի տկն Նազիկին: Սարյանի աշխատասենյակի դուռը փակ էր:

– Փակել եմ, որ մարդ չմտնի, թղթերին ձեռք չտա, ասաց տկն Նազիկը:

Միջանցքում Սարյանի մեծադիր նկարն էր՝ ծաղիկներով ու սեւ ժապավենով երիզված:

– Շնորհակալ եմ, որ թերթերում գրեցիր, վերցրել եմ բոլորը, Սարյանը քեզ շատ էր սիրում, մահից առաջ էլ մի քանի անգամ քո անունը տվեց. Մեռավ լուսադեմին, աղջկա՝ Հասմիկի ծննդյան օրը: Վերջին խոսքն այս էր.

– Հովնանին ասա՝ բալլադներս առանձին գրքով տպել տա...

Հետագայում Հովնանն ինձ պատմեց, որ իր կազմած ու հրատարակած բալլադների գրքից մի օրինակ տարել է դրել Սարյանի գերեզմանին:

Կյանքից հեռանալուց առաջ Սարյանն այցելեց իր ծննդավայր Թավրիզ, շրջեց իր մանկության վայրերում ու Գյուլնարայի հայրենիքում, երկար, հուզմունքով նայեց իրենց բակի ծառերին, որոնք ծաղկել էին, բայց չէին խշշում, այլ հեկեկում էին, հեծկլտում ու ճյուղերը պարզած լալիս էին իր մոր նման...

Հեռանալուց առաջ նա կերտեց իր բախտակից, աշնան վերջին ծաղկի՝ «Քրիզանթեմի» չքնաղ պատկերը, գրեց «Եղբեւանին», «Մայրամուտի ժամանակը» եւ «Վերջին էջը», ուր կանխազգաց մոտալուտ մահը՝ «Արդեն լսում եմ կարծես, ինձ հողի ճայնն է կանչում, ապրողներին օրհնելով՝ ես աշխարհից կգնամ»:

Գեղամ Սարյանը գալոց սերունդներին պատգամեց Արեւելքի գուսանի նուրբ թելերով հյուսված «Գյուլնարա» ու «Գյուլխանդա», «Կըզկալասի», «Դելֆրոնը եւ էլ-Նուրի» եւ մյուս բալլադները, «Ծխախոտս», «Օրացույցը», «Մայրիկիս հետ», «Հոգնած նայում եմ ես ճամփաներին», «Մարտիկի երգը» անմահ գործերը, որոնք պիտի ծնվեն ու ապրեն ամեն սերնդի հետ:

ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ապրողներին օրհնելով նա հեռացավ աշխարհից...

Սուրեն Մուրադյանի եւ Գեղամ Սարյանի քանի բարեկամության էջերից

Գեղամ Սարյանը այսպես մուտք գործեց իմ աշխարհ ու ընդմիշտ մտերմացավ ինձ հետ: Առաջին իսկ հանդիպումից իմ բախտը բերեց. Սարյանի ասելով, նրան «դուր եկավ իմ անմիջականությունը» ու դարձանք բարեկամներ: Այդ բարեկամությունն ավելի խորացավ, քանի որ Սարյանը «Խորհրդային Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ էր եւ մենք հաճախ էինք հանդիպում: Մեր երկարամյա բարեկամությունից ներկայացնում եմ մի քանի տող:



Գեղամ Սարյանի տանն էի: Ծննդյան 70-ամյակի առթիվ հոդված պիտի գրեի: Դեմքը գունատ էր, նիհար, միայն մազերն էին գեղեցիկ, հդարս մնացել:

– Ուզում եմ Ձեր մասին հոդված գրել, ասացի ես:

– Է՜, ինչ ասեմ, շնորհակալ եմ: Իմ կյանքը քեզ ծանոթ է, գրքերն էլ ունես, ազաս գրիր ինչ սիրտդ թելադրում է: Գրելուց հետո, եթե հարցեր լինեն, զանգահարիր:

Նվիրեցի իմ «Վարդեր եւ փշեր» ժողովածուն, որի վրա մակագրել էի. «Միշտ բարի, միշտ սիրելի իմ լավ բարեկամ Գեղամ Սարյանին. հդարս նայիր վարդեն լեռան գագաթին, թող ջահել մնաս դու միշտ կյանքում, քանզի սարը որքան ձյունով պատի, այն հավերժ մնում է վեհ ու կանգուն»: Կարդաց, զգացվեց ու մեղմ ասաց.

– Վարդեր, լավ է, բայց որ փշեր էլ կան՝ լավ չէ:

Հետո ավելացրեց՝ բայց առանց փշի էլ վարդ չկա, հաջող վերնագիր է:

«Խորհրդային Վրաստան» եւ «Կոմունիստ» (ռուսերեն) թերթերում միաժամանակ լույս տեսան իմ հոդվածները Սարյանի մասին: Թերթերը տարա նրան:

– Համեցեք, համեցեք, դուռը բացելով ասաց նա: Ո՞նց ես, հո շատ լավ չե՞ս:

– Կամաց-կամաց, վարդես, դուք ինչպե՞ս եք: «Հլա ողջ ենք», «Միշտ էլ ողջ կլինենք»:

– «Միշտ Աստվածն էլ ողջ չի լինի»: Հոդվածներն աչքի անցկացրեց. «Կեցցես, կեցցես, շնորհակալ եմ, հետո կկարդամ»:

– Ի՞նչ եք գրում, վարդես, երեւի անգգուշորեն հարցրի ես: Նա լռեց, ապա մի քիչ նեղացած ասաց. էլի գրե՞մ, ինչման գրել եմ՝ հերիք է, հերթը քոնն է, քո սերնդինը, դուք գրեք:

Ես զղջացի հարցիս համար ու զրույցը փոխելու նպատակով ասացի.

– Եգիպտոսից եմ եկել: «Այնտեղ ինձ հիշո՞ւմ են», հարցրեց:

«Բոլոր դպրոցներում՝ կահիրեում, Ալեքսանդրիայում, ձեր բանաստեղծությունները սիրում են», ասացի: Շոյվեց, կարծես նեղացածությունն անցավ, ոգեւորվեց. «Լավ է քեզ Փարավոն չեն դարձրել»: Հետո ձայն տվեց կնոջը՝ Նազիկ, Սուրենին մակագրած գիրքս բեր: Նոր գիրք է՝ «Մտերիմ էջեր», Գուրգեն Հովնանն է առաջաբան գրել: «Շատ շեղ է հրատարակվել», ասացի:

– Է, էլ չի ուրախացնում: Ջահել ժամանակ պիտի այսպես հրատարակեին, որ վայելեի, հիմա ի՞նչ...

Գեղամ Սարյանը զանգեց.

– Երեկոյան ժամը 7-ին արի մեր տուն, զրուցենք:

– Համեցեք, Գեղամը ձեզ է սպասում, դուռը բացելով ասաց տկն Նազիկը:

Սարյանը նստած էր տնային խալաթով: Մեղմ հարցրեց.

– Եկա՞ր, նստիր, ի՞նչ կա ձեզ մոտ:

– Խմբագրական հոգսեր, գրական աշխարհում նորություններ չկան, ասացի:

– Ավելի լավ է քո նոր ժողովածուից խոսենք, ասաց Սարյանը: «Երկնից երեք խնձոր ընկավ» գիրքդ ծայրից ծայր կարդացի: Հավանածներս չհավանածներից շատ են: Ժողովրդական մտածողություն կա բանաստեղծությունների մեջ, հատկապես հեքիաթներում, որը ջերմացնում է խոսքը: Դուր եկան սուտասելուկները, այդ շարքը մեծացրու: Բայց զգույշ՝ երեխաներին սուտասան չդարձնես: Կուզեի գրքիդ մասին գրել մի տեղ, բայց շատ տկար եմ: Մի քանի տող կարձիք եմ գրել, պահիր հիշատակ, էսօր կանք, վաղը չկանք: Ասացի, որ Պերեդելկինոյի գրողների տանը Պավել Անտակոլսկուն եմ հանդիպել, բարեւում էր:

– Հա, Անտակոլսկին 1935 թ. թարգմանել է իմ «Գյուլնարան»: Մեր տատիկներին էր: Նույն երեկոյին երկուսս էլ կարդացինք. ես բնագիրը, նա՝ թարգմանությունը: Շատ հայեր կային, ջերմ ընդունեցին: Մեկ էլ մի կին է գալիս շարքերի միջով: Բանաստեղծուհի Սեյրին էր, այժմ մոռացված է: Եկավ ու գրկեց ինձ, շնորհավորեց ելույթս:

Վաղ առավոտյան զանգահարեց Սարյանի կինը՝ տկն Նազիկը:

– Գեղամը շատ ծանր է, ուզում է քեզ տեսնել:

Արագ գնացի: Սարյանը պառկած էր անկողնում՝ նիհարած, սմքած, անվերջ տնքում էր:

– Վերջ, սա վերջն է, Սուրեն ջան, հազիվ ընկաց նա:

Տիկին Նազիկը ինձ մի կողմ տարավ ու վախեցած ասաց.

– Նոր տարությունը չափեցի, շատ բարձր է: Սրտի նոպա է ունեցել, գիշերը չի քնել, 10 օր է, բան չի ուտում: Գանգատվում է ու մահից է խոսում:

Նստեցի Սարյանի մահճակալի առաջ:

– Ի՞նչ կա սփյուռքում, թույլ հարցրեց:

– Վիլյամ Սարոյանն է եկել:

– Սարոյանին տեսել եմ 1935 թվականին: Գրողների տանը ընդունելություն էր: Գնացի:

Սարոյանը Թոթովենցի հետ նստած էր սեղանի ծայրը:

– Ամեն մարդ մի բանի պիտի հավատա, ասաց Սարոյանը:

– Մենք վաղվա օրվան հավատում ենք, ասաց Չարենցը:

– Լավ կլինի Սարոյանը վերադառնալուց հետո գրի ճիշտը, իր տեսածը, ասաց Հարություն Մկրտչյանը: Սարոյանը նեղացավ. «Ես տեսածս կգրեմ միշտ»:

Սեղանը սառեց, ջերմությունը կորավ:

– Էդ ձախորդ քաղաքագետն ինչո՞ւ փչացրեց մեր խնջույքը, մի անգամ հիշեց Դրաստամատ Տեր-Սիմոնյանը:

1976 թ. նոյեմբերի 17-ին Գեղամ Սարյանի թաղումն էր Ֆիլհարմոնիայի մեծ դահլիճից: Գերեզմանոցում խոսեցին Վարդգես Պետրոսյանը, Հրաչյա Հովհաննիսյանը: Սարյանի մահից հետո մի քանի անգամ այցելեցի տկն Նազիկին: Սարյանի աշխատասենյակի դուռը փակ էր:

– Փակել եմ, որ մարդ չմտնի, թղթերին ձեռք չտա, ասաց տկն Նազիկը:

Միջանցքում Սարյանի մեծադիր նկարն էր՝ ծաղիկներով ու սեւ ժապավենով երիզված:

– Շնորհակալ եմ, որ թերթերում գրեցիր, վերցրել եմ բոլորը, Սարյանը քեզ շատ էր սիրում, մահից առաջ էլ մի քանի անգամ քո անունը տվեց. Մեռավ լուսադեմին, աղջկա՝ Հասմիկի ծննդյան օրը: Վերջին խոսքն այս էր.

– Հովնանին ասա՝ բալլադներս առանձին գրքով տպել տա...

Հետագայում Հովնանն ինձ պատմեց, որ իր կազմած ու հրատարակած բալլադների գրքից մի օրինակ տարել է դրել Սարյանի գերեզմանին:

Կյանքից հեռանալուց առաջ Սարյանն այցելեց իր ծննդավայր Թավրիզ, շրջեց իր մանկության վայրերում ու Գյուլնարայի հայրենիքում, երկար, հուզմունքով նայեց իրենց բակի ծառերին, որոնք ծաղկել էին, բայց չէին խշշում, այլ հեկեկում էին, հեծկլտում ու ճյուղերը պարզած լալիս էին իր մոր նման...

Հեռանալուց առաջ նա կերտեց իր բախտակից, աշնան վերջին ծաղկի՝ «Քրիզանթեմի» չքնաղ պատկերը, գրեց «Եղբեւանին», «Մայրամուտի ժամանակը» եւ «Վերջին էջը», ուր կանխազգաց մոտալուտ մահը՝ «Արդեն լսում եմ կարծես, ինձ հողի ճայնն է կանչում, ապրողներին օրհնելով՝ ես աշխարհից կգնամ»:

Գեղամ Սարյանը գալոց սերունդներին պատգամեց Արեւելքի գուսանի նուրբ թելերով հյուսված «Գյուլնարա» ու «Գյուլխանդա», «Կըզկալասի», «Դելֆրոնը եւ էլ-Նուրի» եւ մյուս բալլադները, «Ծխախոտս», «Օրացույցը», «Մայրիկիս հետ», «Հոգնած նայում եմ ես ճամփաներին», «Մարտիկի երգը» անմահ գործերը, որոնք պիտի ծնվեն ու ապրեն ամեն սերնդի հետ:

ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆ

Արեւ էր նա եւ անունով եւ արվեստով

Հայաստանի երաժշտական ընկերության, մշակութային կապերի ընկերության վարչության, «Առնո Բաբաջանյան» ֆոնդի հայկական բաժանմունքի կազմակերպած հուշ-երեկույթը նվիրված էր Հայաստանի ժողովրդական արտիստուհի Արեւ Բաղդասարյանի ծննդյան 85-ամյակին: Արտիստուհուն նվիրված բնութագրերով եւ նրա լուսանկարներով ճաշակով ձեւավորված հրավիրատոմսը հանդիսության վայր էր բերել մեծաթիվ ունկնդիրների, որոնք արտիստուհու բեղնավոր գործունեությունը լուսաբանող ցուցահանդես դիտելուց հետո, ունկնդրեցին համամիութենական եւ հանրապետական մրցույթների դափնեկիր տղաների «Վարդանանք» երգչախմբի ելույթը (գեղ. ղեկավար Ի. Վարդանյան):

Օրվա հիմնական բանախոս, արվեստագիտության թեկնածու Ժաննա Զուրաբյանը ունկնդիրներին ներկայացրեց Արեւ Բաղդասարյանին որպես հազվագյուտ տաղանդի տեր անձնավորություն, որը տասնյակ տարիներ իր անթիվ ելույթներով ջերմացրել է մարդկանց սրտերը: «Ամեն անգամ, երբ ունկնդիր եմ լինում Արեւի հոգեթարար երգին, գրում է Ավ. Իսահակյանը, դիտում նրա մերթ փոքրկուն, մերթ էլ նազանոթով համակված պարը, թվում է, թե իմ հոգու երկնքում ճախրում են սպիտակ աղավնիներ: Արեւը շուրթերի, ձեռքերի ու աչքերի պարտականություն չի կատարում, այլ հոգեկանչով հարուստ կերպարներ է ստեղծում, որոնց ակունքները դարերի մեջ են, ինչպես ինքը Դարաբաղը»:

Արեւ Բաղդասարյանը ծնվել է Շուշիում: Թեեւ ստացել է տնտեսագիտական կրթություն, բայց նրա «աշխատավայրը» քսան տարեկանից եղել է բեմը: Զանազան խմբերում հանդես գալուց հետո 1942-ից դառնում է Հայֆիլհարմոնիայի մենակատար: Հատկանշանակ են նրա ելույթները Հայրենական մեծ պատերազմի տարիներին: «Ճակատամարտը մենք շահեցինք, գրում է Թամանյան դիվիզիայի հրամանատար Նվեր Սաֆարյանը: Կերչը ազատագրված է: Դրանում իհակե «մեղավոր» էին նաեւ մեր հայրենակից արվեստագետները, այնպես որ արվեստն էլ էր օգնում հաղթելուն»: Այդ «մեղավորներից» էր նաեւ Արեւը:

Արեւ Բաղդասարյանը 1955-ից հանդիսացել է երգի-պարի, իսկ 1985-87-ին «Բարեկամություն» երգի-պարի անսամբլի մենակատարուհի եւ ղեկավար: Ունեցել է աշխարհի տասնյակ ժողովուրդների երգերի ու պարերի հարուստ խաղացանկ, հանդես եկել բազմաթիվ երկրներում:

Նրա բեմական գործունեության մասին շատ է գրել մամուլը, 1973-ին լույս են տեսել դրամատուրգ Ալեքսանդր Արամսմանյանի, իսկ օրերս Արեւի որդու Կարեն Ավագյանի ժողովածուները: Վերջինը հեղինակը սիրով նվիրեց հանդիսության մասնակիցներին:

ՀՐԱՉՅԱ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ՈՒՄԱՆՈՎԻ ԱՄԲԻՈՆ

Սուրբ Կարապետ

Արմավիրի մարզի Արշալույս գյուղն ունի մի գեղեցիկ սովորություն: Ավանդական դարձած Զատիկի հաջորդ կիրակին գյուղում գտնվող Սուրբ Կարապետ մատուռում տոն է: Կարապետը եղել է քաջ զորական եւ սիրված բոլորի կողմից: Կռիվներից մեկի ժամանակ հայրենիքի արժանավոր զավակը ընկել է: Նրա ընկած տեղում էլ նրան թաղել են: Անցել է որոշ ժամանակ եւ մի օր տեղի գյուղացի Ալբերտ Աբիսողոմյանին երազ է եկել Աստված եւ ասել, որ կանաչ դաշտերի մեջ գտնվող գերեզմանի վրա եկեղեցի կառուցի եւ անվանի Սուրբ Կարապետ: Եվ ահա, 40 տարվա վաղեմություն ունի Ս. Կարապետը: Սրբի ուխտ են գալիս գյուղի ժողովուրդը եւ այն մարդիկ, որոնք գիտեն այդ մասին:

Գալիս են, յոթ անգամ պտտվում եկեղեցու շուրջը, սրբապատկերների առջեւ մոմ վառում:

Երիտասարդները կազմակերպում են տարբեր խաղեր ու զվարճալիքներ:

Չնայած այժմ չկա Ալբերտը, սակայն նրա ընտանիքն իր հոգածության տակ է առել եկեղեցու պահպանման հոգսերը:

Կանցնեն տարիներ եւ մարդիկ միշտ կհիշեն ու կպահպանեն կանաչ դաշտի մեջ գտնվող սրբավայրը:

ՆԱՐԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԵՊՀ ժուռնալիստիկայի բաժնի
2-րդ կուրսի ուսանողուհի

ԱՇԽԱՏԱՆՔ

Հավատի օջախն օրեցօր քանդվում է

Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի բնակիչները վախ ու դողով են անցնում «Սուրբ Գեւորգ» եկեղեցու կողով: Խոսքն այն ասվածավախության մասին չէ, որը պետք է ունենա յուրաքանչյուր քրիստոնյա: Պարզապես եկեղեցին է վտանգավոր դարձել բնակիչների համար: Տարիներ առաջ կառույցի գմբեթից մի քանի քար վայր ընկնելուց հետո ծածկն սկսեց իջնել: Դրան հաջորդեց շինության ասիմետրիկ քայքայումը, որը շարունակվում է մինչեւ օրս:

«Սուրբ Գեւորգ» եկեղեցին կառուցվել է իններորդ դարում, այնուհետեւ վնասվել ու քայքայվել մոնղոլ-թաթարական արշավանքների ժամանակ: 1905 թ. վերակառուցվելուց հետո, տարիների ընթացքում վերանորոգվել է մասնավոր անձանց կողմից: Ինչպես տեղեկացրեց գյուղապետ Ավետիք Ավետիսյանը, կառույցի հիմնանորոգման համար առնվազն 5-7 հազար ամերիկյան դոլար է պահանջվում: Ուստի հնարավոր չէ դա իրագործել գյուղի բյուջեի հաշվին: «Մեր հույսը ձեռներեցների աջակցությունն է», ասաց նա:

Նշենք, որ խոնարհվող եկեղեցին գանձակցիների միակ արքաեղին է, ուր նրանք իրենց հոգու տուրքն են մատուցում Ամենակարող Արարչին: Ի դեմ, գյուղացիները պատրաստակամություն են հայտնել հիմնավորման աշխատանքներին մասնակցելու գործում: Ըստ գյուղապետի, այսօր ոչ պակաս կարեւոր է մեր անցյալի վկայության, մեր սուրբ պատերի հավատի օջախի վերականգնումը: Նրա հավաստմամբ, «Սուրբ Գեւորգը» կծառայի նպատակին, ուր պարբերաբար կկատարվեն հոգեւոր արարողություններ, իսկ գանձակցիներն այլեւս վախով ու զգուշությամբ չեն անցնի իրենց աղոթատեղի մոտով:

Մոնղոլ-թաթարական արշավանքից հետո երկրորդ անգամ քանդվելու վտանգի տակ գտնվող եկեղեցին նաեւ պետական աջակցության կարիք զգում: Դեմի քրիստոնեության 1700-ամյակը գտնենք ոչ թե խոնարհված եկեղեցիներով, այլեւ խոնարհված արտով:

ՆԵԼԼԻ ՍԱՍՈՒՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Եզրափակիչում «Չելսին» եւ «Շտուտգարտը»

Գավաթակիրների գավաթի կիսաեզրափակիչի պատասխան խաղերը

Եվրագավաթների հերթական եռօրյան ավարտվեց Գավաթակիրների գավաթի խաղարկության մասնակիցների հանդիպումներով:

Լոնդոնում կայացած խաղում ֆուտբոլային եւ բարոյակամային բարձր հատկանիշներ ցուցադրեց տեղի «Չելսին», որն ընդունել էր իտալական «Վիչենցա» թիմին: Երկու շաբաթ առաջ լոնդոնցիները հյուրընկալվելիս 0-1 հաշվով պարտություն էին կրել: Իսկ երբ այս խաղում «Վիչենցայի» հարձակվող Պասկուալե Լուիգոն 32-րդ րոպեին գրավեց «Չելսիի» դարպասը, թվաց, թե ամեն ինչ պարզ է, եզրափակիչի ուղեգիրը բաժին կհասնի իտալացիներին: Սակայն դրան համաձայն չէին Լոնդոնի թիմի ֆուտբոլիստները: 7 րոպե անց «Չելսիի» կազմում խաղացող ուրուգվայցի Գուստավո Պայետան հավասարեցրեց հաշիվը՝ 1-1:

Երկրորդ խաղակեսն ընթացավ «Չելսիի» գերազանցության նշանաբանով, որն առաջին իսկ րոպեներին նոր հաջողության հասավ: «Վիչենցայի» դարպասը խփած երկրորդ գոլը «կազմակերպեցին» «Չելսիի» իտալացի ֆուտբոլիստները: Խաղացող մարզիչ Զանլուկա Վիալլին աջ եզրով սլացավ առաջ, ապա փոխանցում կատարեց Զանֆրանկո Զոլային, որն էլ առաջ մղեց իր թիմին: Իսկ «Չելսիի» հաղթական գոլը 76-րդ րոպեին խփեց ակումբի վետերան Մարկ Ուայզը: Անգլիական թիմը հաղթեց 3-1 հաշվով եւ եզրափակիչ խաղի մասնակից դարձավ:



Գնդակի համար պայքարում են Անդրեյ Սոլոմատինը («Լոկոմոտիվ») ձախից եւ Մարկո Հաբերը («Շտուտգարտ»)

Թվում էր, թե Մոսկվայի «Լոկոմոտիվը» իրական հնարավորություններ ունի գերմանական «Շտուտգարտի» հետ խաղում, քանի որ առաջին հանդիպման ժամանակ գիջել էր նվազագույն 1-2 հաշվով: Ռուսներն ակտիվ սկսեցին խաղը, բայց ոչ մի իրական վտանգ չստեղծեցին մրցակցի դարպասին: «Շտուտգարտը» հմտորեն պաշտպանվում էր, իսկ հնարավորության դեպքում նաեւ գրոհում: Խաղի 23-րդ րոպեին Պոբեդ Սլոբոդրի Բոբիչ սրընթաց գրոհի վերջում Թրեդի Բոբիչը մոսկվացիների դարպասապահ Ռուսլան Նիգմատուլինի կողքով գնդակն ուղարկեց դարպասի հեռավոր անկյունը (հիշեցնեմ, որ առաջին հանդիպման ժամանակ եւս Բոբիչն էր խփել հաղթական գոլը): «Լոկոմոտիվը» շարունակում էր գրոհել, սակայն անարդյունք:

«Չելսիի» խաղացողներ Զանֆրանկո Զոլան (աջից) եւ Ֆրանկ Լեբոֆը փորձում են կասեցնել Գաբրիել Ամբրոզեսիի գրոհը

Երկրորդ խաղակեսում մոսկվյան թիմի գլխավոր մարզիչ Յուրի Սյոմինը փոխարինումների միջոցով փորձեց ուժեղացնել հարձակման գիծը, սակայն ոչինչ չօգնեց: Խաղավարից 5 րոպե առաջ Յուրի Խաղլաչովի հարվածից հետո գնդակը հայտնվեց «Շտուտգարտի» դարպասում, սակայն մոսկվացին խաղից դուրս վիճակում էր: Այսպիսով, գերմանական թիմը հաղթեց 1-0 հաշվով եւ դարձավ եզրափակիչի երկրորդ մասնակիցը:

Գավաթակիրների գավաթի խաղարկության եզրափակիչ խաղում «Չելսին» եւ «Շտուտգարտը» կհանդիպեն մայիսի 13-ին, Ստոկհոլմի «Ռոսունդա» նշանավոր մարզադաշտում:

Ռ. Ա.

Ժան Տիգանան կփոխարինի Էմե Ժակեին

Ֆուտբոլի աշխարհի առաջնության ավարտից հետո Ֆրանսիայի հավաքականի գլխավոր մարզիչ Էմե Ժակեին կփոխարինի «Մոնակո» ակումբի մարզիչ Ժան Տիգանան: Թեեւ առայժմ որեւէ պայմանագիր չի ստորագրվել, բայց Ֆրանսիայի ֆուտբոլի ազգային լիգայի նախագահ Նոել լը Գրաեն հավաստում է, որ Տիգանայի թեկնածությունն այլեւս կասկած չի հարուցում: 1955 թ. հունիսի 23-ին Բամակոյում (Մալի) ծնված Ժան Տիգանան վերջերս արդեն համարվում էր հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնի ամենահավանական թեկնածուն: Այուս հավակնորդների՝ Ալեն Ժիրեսի, Արսեն Վենգերի եւ Լուիս Ֆեռնանդեսի նկատմամբ Տիգանան ունի որոշակի առավելություն, քանի որ նրա թեկնածությունը պաշտպանում են «Ֆրանսիա-98»-ի կազմկոմիտեի նախագահ Միշել Պլատինին եւ Նոել լը Գրաեն:

Նոել լը Գրաեի եւ Ժան Տիգանայի վերջնական համաձայնությունը կայացավ օրերս, փարիզյան ռեստորաններից մեկում նրանց համատեղ ճաշկերույթի ժամանակ, տեղեկացնում է «Էկիպ» մարզական օրաթերթը: Տիգանան ոչ միայն ձգտում է դառնալ հավաքականի գլխավոր մարզիչ, այլեւ դրա համար ունի բոլոր տվյալները: Դեռ 1992 թ., երբ Միշել Պլատինին թողեց հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնը, Տիգանան Նոել լը Գրաեի հետ սկսել էր բանակցել թափուր պաշտոնին տիրանալու համար: Ի դեպ, Ֆրանսիայի ֆուտբոլային գրեթե բոլոր ղեկավարները հավանություն են տալիս Տիգանայի թեկնածությանը:

Աշխարհի առաջնության ավարտից հետո 43-ամյա Տիգանան կանչի գլխավոր մարզչի պարտականությունները: Միշել Իդալգոն 1976 թ. նույն տարիքում էր սանձնել այդ պաշտոնը: Միշել Պլատինին հավաքականի գլխավոր մարզիչ էր նշանակվել 33 տարեկանում, Անրի Միշելը 37 տարեկանում: Տիգանան Ֆրանսիայի հավաքականի կազմում խաղացել է 52 անգամ: Բայց դա բացառիկ նվաճում չի համարվում, քանի որ հավաքականի 5 վերջին գլխավոր մարզիչներից 4-ը նույնպես հանդես են եկել այդ թիմում: Միակ բացառությունը Ժերար Ուլիեն է, որը պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ չէր: Միշել Իդալգոն հավաքականի կազմում խաղացել է 1 անգամ, էմե Ժակեն՝ 2, Անրի Միշելը 58, Միշել Պլատինին՝ 72 անգամ:

Մարզական մեկնաբանները հավանական են համարում, որ «Մոնակոյի» ներկայիս մարզիչը հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնը ստանձնելիս Ֆրանսիայի ֆուտբոլային ղեկավարներին կառաջադրի որոշակի պայմաններ: Անշուշտ, նա կպահանջի բարձր աշխատավարձ, բայց նաեւ կուզենա անձամբ ընտրել իր օգնականին, ինչպես նաեւ մասնակցել երիտասարդական հավաքականի առաջադիմության մարզչի ընտրությանը: Վերջին դեպքում Նոել լը Գրաեն հավանական է համարում Ռոժե Լըմերի կամ Պատրիս Բերգի թեկնածությունը: Մինչդեռ Տիգանան կուզենար այդ պաշտոնում տեսնել իր համախոհներից մեկին:

Ժան Տիգանան իր մարզչական գործունեությունն սկսեց 1993 թ. Լիոնում, այդ քաղաքի գլխավոր թիմը 1995 թ. բարձրացնելով ուժեղագույնների խմբի 2-րդ տեղը: 1995 թ.-ից մարզում է «Մոնակո» ակումբը, որը 1997 թ. դարձավ Ֆրանսիայի չեմպիոն եւ վերջին 2 մրցաշրջաններում 2 անգամ հասավ եվրոպական մրցաշարերի կիսաեզրափակիչ: Տիգանան իր ժամանակի զգալի մասը հատկացնում է զանգվածային լրատվամիջոցներին: Վերջին տարիներին նրա հարաբերությունները սրված են ֆրանսիական TF1 հեռուստաընկերության հետ, որի միջոցով նա մտադրվել էր կազմակերպել իր 40-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառումները: Սակայն իրեն խաբված զգալով Տիգանան այլեւս չի առնչվում TF1-ի հետ եւ նույնիսկ չի մասնակցում Չեմպիոնների լիգային նվիրված հաղորդումներին, չնայած ՈՒԵՖԱ-ի հետ կնքված պայմանագրի պահանջներին: Նույնիսկ անցյալ տարի, երբ մարզական հատուկ հաղորդում կազմակերպվեց «Մոնակոյի» չեմպիոնության առթիվ, ակումբի ամբողջ կազմը հեռուստատուդիայում էր, բացի գլխավոր մարզչից:

Պատրաստեց
ՊԵՏՐՈՍ ԲԵՐԲԵՐՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

Նոր մարզաձեւի պաշտոնական գրանցումը

Երեկ ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցվեց ռինգո մարզաձեւի հանրապետական ֆեդերացիան (նախագահ՝ Պետրոս Մարուքյան): Մինչ այդ էլ մեզանում մրցումներ անցկացվել են այդ մրցաձեւից, սակայն գործունեությունն ավելի կախուժանա այժմ՝ ֆեդերացիայի ստեղծումից հետո: Մայիսի 8-10-ը Արմավիրի մարզում կանցկացվեն ստուգողական մրցումներ, որոնց արդյունքներով կկազմավորվի հանրապետության հավաքականը: Իսկ հունիսի 11-15-ին մեր լավագույն մարզիկներն առաջին անգամ հանդես կգան Լեհաստանի Կրակով քաղաքում կայանալիք եվրոպայի առաջնությունում:

Հանրապետության բաց առաջնությունը

Մայրաքաղաքի Աբովյանի անվան դպրոցում մեկնարկել է մարզական բրիջի Հայաստանի 8-րդ առաջնությունը, որը 3 օր կտեւի: Մրցումներին մասնակցում են Երեւանի 9, Աշտարակի 1 եւ Վրաստանի 2 զույգեր: Առաջնությունը բաց է, եւ հարեւան երկրի ներկայացուցիչներն արդեն 4-րդ անգամ են հանդես գալիս Երեւանում: Ընդ որում, երկու զույգերն էլ բավականին ուժեղ են եւ մրցումների հաղթող դառնալու հիմնական հավակնորդներից են: Ինչպես զրույցի ժամանակ ասաց հանրապետական ֆեդերացիայի նախագահ Արտյոմ Բալոյանը, Հայաստանի առաջնությունը հնարավորություն կտա որոշելու այն ուժեղագույններին, որոնք իրավունք կստանան մասնակցելու միջազգային մրցումներին: Մասնավորապես, մեր երկու զույգերը մոտավորապես 20 օր հետո հանդես կգան Վրաստանի բաց առաջնությունում:

Բազմօրյայի առաջին փուլը

Երեկ անցկացվեց հանրապետական ֆեդերացիայի կազմակերպած բազմօրյա հեծանվավազքի առաջին փուլը: Էջմիածին-Պարզ լիճ-Էջմիածին 25 կիլոմետր տարածությունում հաղթեց ֆիզկուլտուրայի ինստիտուտի ներկայացուցիչ Արմեն Գյոզալյանը: Նրա արդյունքն է 33 րոպե 11 վայրկյան: Հաղթողից ետ մնալով 12 վայրկյանով՝ երկրորդ տեղը գրավեց նրա թիմակից Արսեն Ղազարյանը: Երրորդ տեղում է Մայիս Ամրեսյանը («Աշխատանքային հերթափոխ»)՝ 34 րոպե 9 վայրկյան: Այսօր՝ երկրորդ փուլում, հեծանվավազքի մասնակիցները հանդես կգան Փարաքար-Էջմիածին-Արմավիր-Աշտարակ 110 կիլոմետր երկարությամբ մրցաշարածությունում:

Կմասնակցեն Եվրոպայի առաջնությանը

Ապրիլի 20-ից մայիսի 4-ը Քիշնեւում եւ Սոֆիայում կանցկացվեն թենիսի եվրոպայի պատանեկան առաջնությունները: Քիշնեւում կմրցեն մինչեւ 14, Սոֆիայում՝ մինչեւ 16 տարեկան թենիսիստները: Եվրոպական ստուգատեսին կմասնակցեն նաեւ մեր հանրապետության ներկայացուցիչները: Քիշնեւում հանդես կգան Տաթեւիկ Բաբայանը, Հերմինե Սուքիասյանը, Արման Սիմոնյանը, Հովհաննես Դավթյանը, Սոֆիայում՝ Իրինա Ոսկանյանը, Հարություն Սոֆյանը, Տիգրան Մարտիրոսյանը:

Բարձրագույն եւ առաջին խմբերի մրցաշարերը

Այսօր տեղի կունենան Հայաստանի առաջնության բարձրագույն խմբի մրցաշարի 7-րդ տուրի երեք հանդիպումներ: Կմրցեն «Փյունիկ»-«Շիրակ-2», «Ցեմենտ»-«Երեբունի-ՀՄՄ», «Արարատ»-«Շիրակ» զույգերը: Իսկ տուրի 4-րդ խաղը՝ «Ղարաբաղի» եւ «Դվինի» միջեւ, կանցկացվի ապրիլի 22-ին, քանի որ Արտաշատի թիմի մեծ թվով ֆուտբոլիստներ հանրապետության պատանեկան հավաքականի կազմում այսօր կմրցեն Պորտուգալիայի իրենց հասակակիցների հետ:

Անցկացվեցին հանրապետական առաջնության առաջին խմբի մրցաշարի 3-րդ տուրի խաղերը: Ահա դրանց արդյունքները. «Զվարթնոց»-ՖԻՄՄ՝ 2-1, «Լոռի»-«Ալաշկերտ»՝ 2-0, «Ղարաբաղ-2»-«Մուշ»՝ 0-1, «Նաիրիտ»-«Սպիտակ»՝ 4-3, ՆՀՄՍ-«Նիգ»՝ 3-1, «Դինամո»-«Քասախ»՝ 2-0:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. ՆՀՄՍ	3	3	0	0	10-1	9
2. Նաիրիտ	3	3	0	0	9-5	9
3. Զվարթնոց	3	2	1	0	6-2	7
4. Լոռի	4	2	1	1	4-3	7
5. Սպիտակ	3	2	0	1	10-4	6
6. Մուշ	3	1	1	1	2-4	4
7. Լեռնագործ	1	1	0	0	2-1	3
8. Նիգ	3	1	0	2	6-7	3
9. ՖԻՄՄ	2	0	0	2	2-4	0
10. Քասախ	3	0	0	3	1-8	0
11. Ղարաբաղ-2	4	0	0	4	2-11	0

Թենիսի երկու մրցաշար

Այս օրերին թենիսի երկու խոշոր մրցաշարներ են անցկացվում:

Բարսելոնում բոլոր երեք խաղերն իր օգտին է ավարտել եվգենի Կաֆելնիկովը: Վերջին խաղում նա 7-6, 3-6, 6-1 հաշվով պարտության մատնեց իսպանացի Կառլոս Մունյոսին: Սակայն հաղթանակները դժվարությամբ են տրվում ռուս թենիսիստին: Քառորդ եզրափակիչում նա պետք է հանդիպի մեկ այլ իսպանացու՝ Ալբերտո Բերասատեգիի հետ (վերջինս 3-րդ փուլում հաղթել է իր հայրենակից Ալբերտո Կոստային): Երրորդ շրջանում անհաջողության մատնվեց Ռուսաստանի մեկ այլ ներկայացուցիչ՝ Մարատ Սաֆինը: Նա 4-6, 6-3, 2-6 հաշվով զիջեց Կառլոս Կոստային: Ֆավորիտ համարվող թենիսիստներից հաջող է հանդես գալիս Թոմաս Մուստերը (Ավստրիա): Իսկ իսպանացի Ալեխս Կորետյան պարտություն կրեց իտալացի Անդրեա Գաուդենցիից:

Տոկիոյի մրցաշարում անսպասելիորեն պայքարից դուրս մնաց Պատրիկ Ռաֆթերը (Ավստրալիա): Նա պարտություն կրեց ռեյտինգ-ցուցակի 181-րդ թենիսիստ Բրայան Մակֆիից (ԱՄՆ): Ռաֆթերի օրինակին հետեւեցին նաեւ մի շարք այլ ուժեղ թենիսիստներ:

Ամերիկացի Մայքլ Չանգը, որն անհաջողության էր մատնվել Հոնկոնգի մրցաշարում, այստեղ արդեն երկու հաղթանակ է տարել եւ լավատեսորեն է գնահատում իր հնարավորությունները:

Բարսելոնի մրցաշարում հաջող է խաղում իսպանացի Կառլոս Մայան

digitised by A.R.A.R.@

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Դարբինյանական թիմը՝ կադրերի դարբնոց

Կառավարության երիտասարդ պաշտոնյաների բեմելը

Հինգշաբթի օրը կառավարությունում տեղի ունեցած ճեղազրույցը նշանավորվեց Հայաստանի երիտասարդ վարչապետի առավել երիտասարդ թիմի բեմելով: «Խունվեյբիններ», «մանկապարտեզ», «երեխաներ». կառավարության աշխատակազմի տարեց աշխատողներն այսպիսի բառերով են որակել ջահելների այս դասակի սրընթաց մուտքը թանձրանական պալատ: Այս որակումներին կարելի է համաձայնվել միայն մեկ առումով. պետական աղարտաս է գալիս մեծ հավակնություններ (բառիս լավ իմաստով), բարդույթներից զուրկ, որակապես նոր կրթություն ու որակ ունեցող մի նոր սերունդ, որը կկազմի Հայաստանի Հանրապետության վարչակազմի առանցքը եկող դարի սկզբներին: Թող ներվի այս բառախաղը, սակայն թվում է, որ դարբինյանական թիմը կադրերի դարբնոց կհանդիսանա եկող հազարամյակի առաջին քառորդի մեր կառավարությունների համար:

Ճեղազրույցը վարեց վարչապետի աշխատակազմի նոր ղեկավար Ասոն Մանուկյանը: Նա ծնվել է 1968 թ. Երևանում, ծառայողի ընտանիքում: Ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի մեխանաշինական ֆակուլտետը մեծաղահաս հաստոցներ ու սարքեր մասնագիտությամբ, ստանալով ինժեներ-մեխանիկի մասնագիտացում (1992 թ.), եւ Հայաստանի ամերիկյան համալսարանի գործարար կառավարման դասընթացը. ֆինանսների ու բանկերի մենեջեր մասնագիտությամբ, ստանալով գործարար կառավարման մագիստրոսի աստիճան (1995 թ.): 1996 թվականից Չեխիայի գիտությունների ակադեմիայի եւ Պրահայի Կարլի համալսարանի տնտեսագիտական հետազոտությունների կենտրոնի հեռակա հայցվոր է:

1987-89 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1990-91 թթ. աշխատել է հանրապետության կոմերիսմիության ժառանգորդ Հայաստանի երիտասարդական միության (ՀԵՄ) խորհրդում որպես նախագահի օգնական, 1991-1992 թթ. ՀԵՄ-ի հասարակական կարծիքի եւ ինֆորմատիկայի հանձնաժողովի նախագահ: 1992-94 թթ. եղել է «Շանթ» ֆիրմային կոոպերատիվ միավորման փոխնախագահ (այդ ձեռնարկությունը ժամանակին ստեղծվել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի կոմերիսմիության կոմիտեի կողմից): 1994-95 թ. մասնակցում էր «Ռեսպուբլիկա Արմենիա» պաստոնաթերթի հատուկ թղթակից, հետագայում աշխատակցել է թղթակցել հանրապետական թերթերին: 1995-96 թթ. աշխատել է ՀՀ կենտրոնական բանկում որպես ԿԲ-ի նախագահի խորհրդական, 1996 թ. ԿԲ աղարտի կառավարման վարչության պետ, 1996-97 թթ. ԿԲ խորհրդի աշխատակազմի ղեկավար-բաժնի պետ: Անցյալ տարվա հոկտեմբերից ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության fարտուղարության (վարչության) պետ, ս.թ. հունվար-փետրվարին տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաստոնակատար, փետրվարից նախարարության աշխատակազմի ղեկավար-գլխավոր վարչության պետ: Տիրապետում է անգլերենի ու չեխերենի:



Ճեղազրույցի ժամանակ կառավարության նիստերի դահլիճի անկյունի ժամացույցի կողին նստած էր վարչապետի նոր օգնական Բագրատ Թունյանը: Նա ծնվել է 1975 թ. Կիրովական քաղաքում, ծառայողի ընտանիքում: Անցյալ տարի գերազանցությամբ ավարտել է Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի միջազգային տնտեսական հարաբերությունների բաժինը, ինչպես նաեւ Սավոյիայի (Հունգարիա) միջազգային ամառային համալսարանի «Հայտնագործել կենտրոնական Եվրոպան» երկշաբաթյա ամառային դասընթացները: Ուսանող եղած ժամանակ 1995-96 թթ. եղել է «Հայ հաց» ՍՊԸ հայ-ուկրաինական համատեղ ձեռնարկության գլխավոր հաշվապահ: 1996 թ. մրցույթի արդյունքներով աշխատանքի է ընդունվել ՀՀ Կենտրոնական բանկ, ուր եղել է էմիսիոն գործառնությունների ու դրամական պահուստների վարչության մասնագետ, ԿԲ նախագահի ու փոխնախագահների աշխատակազմի օգնական-ռեֆերենտ, 1997 թ. օգոստոսից Հայաստանի ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ղեկավարն էր: Անցյալ տարվա մարտին նրա աշխատանքը հաղթող է ճանաչվել միջազգային ժյուրիի կողմից եւ նրան հրավիրել են Քյոլն 6-դ գերմանական բիզնես կոնգրեսին: Տիրապետում է անգլերենի:

Հասմիկ Պետրոսյանի նախկին հետախուզասիամարով այժմ պատասխանում է Արմեն Մաթոսյանը, որը ներկայանում է իբրեւ վարչապետի մամուլի ծառայության նոր ղեկավար: Նա Բ. Թունյանի հասակակիցն է ու համակուրսեցին: Ծնվել է Երեւանում, ավարտել է ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի միջազգային տնտեսական հարաբերությունների բաժինը: 1996-97 թթ. եղել է «Սեմ եւ ընկ.» ՍՊԸ թարգմանիչ, այնուհետեւ մարքեթինգի գծով կառավարիչ: 1997 թվականի նոյեմբերից աշխատել է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունում որպես fարտուղարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ:

Ա. Մաթոսյանին օգնում է Երեւանի օտար լեզուների պետական ինստիտուտի շրջանավարտ Լուսինե Նազարյանը: Նա երեւանցի է, անգլերենի մասնագետ, անցյալ տարվանից աշխատել է ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության fարտուղարությունում:

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ

Եհովայի վկաներն ադրբեջանցիներին էլ են հրապուրում

Թբիլիսիի երկաթուղային գլխավոր կայարանի առջեւ, ուր բազմաթիվ ադրբեջանցիներ են լինում հասկանալու Թբիլիսի-Բաքու գնացքի մեկնելուց առաջ, երկու կանայք Քեթոն եւ Նանուլին (այդպես ներկայացան) իրենց շուրջն էին հավաքել բազմաթիվ մարդկանց: Մոտ 50 տարեկան Քեթոն եւ հազիվ 20-ը բոլորած Նանուլին բարձրաձայն բացատրում էին Եհովայի աղանդի դպաստությունը, շրջապատի մարդկանց, ըստ ցանկության վրացերեն, ադրբեջաներեն եւ ռուսերեն լեզուներով գրքույկներ բաժանում: Զարմացա, երբ ադրբեջանցի մի երիտասարդ սիրով ընդունեց գրքույկները եւ խոստացավ Բաքվում տարածել հայրենակիցների շրջապատում:

Ուրեմն իսկա՞մն էլ է հանդուրժում այդ աղանդը: Երբ գնացքը մեկնեց, տիկին Քեթոյին հարցրի. «Կներեք հետաքրքրությանս համար՝ ադրբեջանցիներն ընդունո՞ւմ են Եհովայի վկաներին»:

Հարցս բոլորովին չզարմացրեց փորձառու եւ բավականին կարդացած վրացուհուն: Նա անմիջապես դպաստասխանեց. «Ես կասեի նրանք սիրով են անցնում Եհովականների շարքերը: Ասեմ ավելին՝ երեք ամիս առաջ Բաքվում էինք. աղանդի մեջ ընդունեցինք Զուլֆիա անունով 18 տարեկան մի աղջկա... Նա, իհարկե, գիտակցում էր հանդուգն քայլի լրջությունը, սակայն չէր դպակերացնում ինչպիսի արձագանք կունենա: Բաքվից մեր մեկնելու հաջորդ օրը Զուլֆիայի երիտասարդ ծնողները գազանաբար ծեծել են աղջկան, որը մի կերպ ազատվելով հարազատների ձեռից, հասնում է Թբիլիսի մեզ մոտ: Այժմ նա աշխատում եւ բնակվում է Մառնեուլիում, իր նոր հոսի հետ, ուր բազմաթիվ ադրբեջանցիներ կան:

Մի զարմացեք՝ ժամանակները փոխվել են: Միայն այս տարվա անցած երեք ամիսներին մենք գրանցել ենք 30 ադրբեջանցիների, որոնք հրաժարվել են իսլամից եւ ընդունել մեր fարոգած աղանդը: Բնական է, հավատափոխությունից հետո նրանք չէին կարող մնալ Բաքվում, ուստի եւ բնակություն են հաստատել Թբիլիսիում»:

ՄԻՀՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Թբիլիսի-Երեւան

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Հայաստանի մասնաճյուղը հայտարարում է մրցույթ

ՖՈՏՈԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մրցույթի նպատակն է օժանդակել լուսանկարչական վավերագրական այնպիսի ծրագրերի, որոնք կազմված են երկարատեւ դիտարկումների հետ: Դիտարկումների առարկա կարող է լինել առանձին անհատ, անհատների խումբ, համայնք, տարածաշրջան կամ խնդիր:

Հաղթողները կստանան մինչեւ 1500 ԱՄՆ դոլարի համարժեք նպաստ: Այն նախատեսված է այն ձեռնարկումների համար, որոնք դժվար կլիներ իրականացնել առանց Հայաստանի բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի (ՀԲՀԻՕՀ) օգնության:

Ծրագիրը պետք է իրականացվի մինչեւ 1998 թ. սեպտեմբերի 1-ը: Ծրագրի ավարտից հետո մասնակիցները պետք է ներկայացնեն աշխատանքների պորտֆոլիոն: ՀԲՀԻՕՀ-ն իրեն վերապահում է ցուցահանդեսի կազմակերպման եւ (կամ) կատալոգի հրատարակման իրավունք: Առանձին աշխատանքների եւ ամբողջ ծրագրերի հեղինակային իրավունքները մնում են հեղինակների մոտ:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

1. Ծրագրի նկարագրությունը եւ նրա կապը Ձեր նախորդ աշխատանքի հետ (մեկ էջից ոչ ավելի),
2. Ձեր ստեղծագործական գործունեության հակիրճ նկարագրությունը (1 էջ),
3. Ձեր նախագծի հետ առնչվող 10-15 լուսանկար (սեւ-սպիտակ, գունավոր, սլայդ): Աշխատանքների վերադարձը չի երաշխավորվում, հեղինակային իրավունքները պահպանվում են:

Փաստաթղթերը պետք է ներկայացվեն Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղ մինչեւ ս/թ մայիսի 15-ը:

Հասցե՝ Երեւան 375019, Այգեձոր 53բ
Հեռ. 27-21-19, 27-17-19

Մրցույթի արդյունքները հայտնի կդառնան 1998 թ. հունիսի 1-ին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ
Armenian Airlines

«Հայկական ավիաուղիներ ավիաընկերությունը» մայիսի 2-ից յուրաքանչյուր շաբաթ օր իրականացնելու է Երեւան-**Միլան**-Երեւան կանոնավոր չվերթը:

Տոմսերը կարող եք ձեռք բերել «Հայկական ավիաուղիներ ավիաընկերության» բոլոր գործակալություններից:

Տեղեկությունների համար զանգահարեք
58-39-69

Բոլորի՛ն
Այժմ Հայաստանում էլ է հնարավոր:
Քաշի նվազեցման նոր մեթոդներ:

Գրանցումը՝ **58-40-94** հեռախոսահամարով:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

1 սենյականոց բնակարան, Ֆրունզեի փ. շենք 6, 11 բն., 5 հարկանի շենքի 5-րդ հարկում:

Հեռ.՝ 44-92-34, 44-66-95

(«Հայրենիք» կինոթատրոնի մոտ):

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:

Զանգահարել՝ 27 22 57 ժամը 10-16, 58 33 26 ժամը 18-23

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրքերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur):

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունեաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատուեր 804. Տպաքանակը՝ 3500. Ստորագրված է տպագրության՝ 17.04.1998. Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@